

225

5(075)

4-39

4-1912

2010

57075)  
Լ-39

# Գ Ա Ս Ա Գ Ի Ր Ք Բ Ն Ա Կ Ա Ն Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ե Ա Ն

Ա. Տ Ա Ր Ի

(Մարդ, կենդանիներ, բոյսեր, Հանրեր և Բնական երևոյթներ)

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.  
ԿԱԶՄԱՆՑ՝ 40 ԿՈՊ.



Կ Ա Ջ Մ Ե Յ Ի Ն

Յ. Տ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ և Ռ. ՕՂԱՆՋԱՆԵԱՆ

Համաձայն «Հայոց Եկեղեցական Տարրական Դպրոցների Ուսումնական Ծրագրի»:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Պ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Բարեխօսաւ

Երևանի մարտի «ԿՈՒՆՏՈՒՐԱ»



ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ձեռնարկելով ներկայ դասագրքի երկրորդ տպագրութեանը, կարևոր ենք համարում ասել հետևեալը.

Մեր եկեղեցական տարրական դպրոցները բաժանուով են երկու կարգի՝ միջատեանի և երկդատեանի: Միդատեան դպրոցներն ունին երեքամեայ դասընթաց, իսկ երկդատեան դպրոցները՝ վեցամեայ դասընթաց: Բնական պատմութեան ուսուցումն սկսուով է երրորդ տարուց և վերջանում է վեցերորդ տարւայ դասընթացքով, շաբաթական աւանդելով 3 դաս. այսպիսով բնական պատմութիւնն աւանդուով է չորս տարւայ ընթացքով, երրորդ նախակրթարանից սկսած, ուր սովորուով են 10—12 տարեկան մանուկներ:

Բնական պատմութեան առարկաներն են՝ կենդանաբանութիւնը, բուսաբանութիւնը, հանքաբանութիւնը, ֆիզիկան, քիմիան և այլն, որոնց նպատակն է ուսումնասիրել բնութիւնը, որի ծոցում ապրում է մանուկը և որը հանդիսանում է մանկան հոգեկան աշխարհի օրէնէկալը, նրա մտաւոր պահանջների բովանդակութիւնը, հետեապէս, նրա կրթութեան և դաստիարակութեան պայմանաւորումը. այսպիսով բնական պատմութեան ուսուցման անհրաժեշտութիւնը տարրական դպրոցներում վաղուց ճանաչւած է ժամանակակից ականաւոր մանկավարժների կողմից: Սակայն ենթադրել, որ այս առարկաներն, իբրև ամբողջացրած առարկաներ, իրենց իսկական խմատով հնարաւոր է աւանդել այնպիսի տարրական դպրոցներում, ինչպիսին ներկայանում են մեր եկեղեցական տարրական դպրոցներն իրենց դասընթացքով, միամտութիւն կը լինի. 10—12 տարեկան մանուկի ուղեղն ու յիշողութիւնը ծանրաբեռնել անվերջ աէրմիներով և գիտական դարձւածքներով, այդ կլինի անուազն հակամանկավարժական մի դործ:



78159-աւ

18012

Միւս կողմից գատել այդ առարկաները միմեանցից, աւանդել նրանց իբրև առանձին առարկաներ և կամ մի դասարանում աւանդել մի առարկան, յաջորդ դասարանում աւանդել միւս առարկան և այլն, ինչպէս այդ անում են միջնակարգ, որոնց թւում նաև մեր թեմական դպրոցներում, ուր աշակերտութիւնն ունի որոշ պատրաստութիւն, և այդ սիստեմի ուսուցումն պահանջել նաև մեր եկեղեցական տարրական դպրոցների համար, դարձեալ կ'լինի անտեղի, որովհետև ինքն ըստինքեան հարց է ծագում, թէ ո՞ր առարկային պէտք է գերադասութիւն տալ և ո՞րն ամենից առաջ պիտի աւանդել մանուկին. չէ՞ որ մանուկը ամեն օր տեսնում է և կենդանիներ, և բոյսեր, և հանքեր, նա տեսնում է մարմինների շարժողութիւնն ու անկումը, լամպայի ու մոմի բոցը, փայտի ու ածուխի այրումը, ջրի գոլորշիացումը և նման բազմազան երևոյթներ: Չէ՞ որ այդ բոլորը, կազմելով նրա ամենօրեայ տպաւորութիւնները, առաջ են բերում նրա մէջ բազմակողմանի հարցասիրութիւն:

Առաջնորդելով այս բանով միանգամայն նպատակայարմար է, որ բնական պատմութեան բոլոր առարկաներն աւանդւեն գուլգընթացաբար, իբրև մի ամբողջութիւն և աւանդւեն այնպիսի ծաւալով, հասկանալի լեզուով և մատչելի ձևով, որ աւանդածը միանգամայն համապատասխանի մանուկի հասկացողութեանը և մտաւոր կարողութիւններին:


Բացի այդ, ինչպէս յայտնի է, երկդասեան լրիւ դասընթացքներով դպրոցներ շատ քիչ կան մեզանում. շատ շատ, քաղաքներում և մի քանի կենտրոնական գիւղերում կը պատահէք դպրոցների, որոնք լրիւ դասընթացքներ ունին. մեր տարրական դպրոցների խոշորագոյն մասն ունի երեք կամ չորս տարւայ դասընթացք: Եթէ բնական պատմութեան առարկաներն աւանդւեն զատ զատ առանձին դասարաններում, այդ դպրոցներից դուրս եկող աշակերտներն, անցած լինելով նրանցից մէկը կամ երկուսը, բոլորովին գաղափար չը պիտի ունենան միւս առարկաների մասին, մինչդեռ երբ բոլոր առարկաներն աւանդւեն գուլգընթացաբար, աշակերտը նրանց բոլորի մասին կունենայ ընդհանուր գաղափար, թէկուզ ամփոփ ձևով:

Ի՞նչպիսի ունենալով այս բոլորը, մենք միանգամայն նըպատակայարմար ենք գտնում բնական պատմութեան այն ծրագիրը, որը կազմւած է մեր եկեղեցական տարրական դպրոցների համար:

Համաձայն այդ ծրագրի, բնական պատմութեան բոլոր առարկաները, սկսած երրորդ տարւանից մինչև վեցերորդը, աւանդւում են գուլգընթաց և կօնցենտրիկ ձևով:

Այդ ծրագրին, ահա, հետևել ենք մենք մեր ներկայ դասագիրքը կազմելիս, ձեռքի տակ ունենալով մի շարք ուսերէն և հայերէն ձեռնարկներ:

Մասնաւորելով մեր խօսքը ներկայ երկրորդ տպագրութեան մասին, կարևոր ենք համարում յայտնել, որ նախ՝ մեր կազմած դասագիրքն սպասածից աւելի ընդունելութիւն գտաւ. երկրորդ՝ մի քանի ուսուցիչներ, որոնք բնական պատմութիւնն անցել են մեր դասագրքով, նրա նիւթերի դասաւորութեան, ծաւալի և պատմելու ձևի մասին ընդհանրապէս տւեցին նպաստաւոր կարծիք, այդ պատճառով մենք երկրորդ տպագրութեան մէջ խոշոր փոփոխութիւններ չը մտցրինք, այլ բաւականացանք մի քանի լրացուցիչ յաւելումներով և այն թերութիւնների ուղղումներով, որոնց վրա կանգ էին առել մեր քննադատները և դասատու ուսուցիչները:



## Մ Ա Ր Պ

Մարդը կենդանի արարած է. նա ծնւում է ու մեծանում, ծերանում է ու մեռնում. նա ուտում է, խմում է, շարժւում է, ման է գալիս. նա միլենոյն ժամանակ խօսում է, դատում է և խելացի գործեր է կատարում: Այդպիսի մարդիկ են մեր հայրը, մեր մայրը, մեր եղբայրներն ու քոյրերը. այդպիսի մարդ ենք և մենք:

ՄԱՐՄԻՆ.—Մենք ունինք գլուխ, վիզ, կուրծք, փոր, մէջք, ձեռներ ու ոտներ. այդ բոլորը միասին կոչւում են մարմին:

## ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԸ.

Մեր մարմինը կազմւած է հետեւեալ գլխաւոր մասերէն—գլխից, իրանից, ձեռներէից ու ոտներէից:

Գլուխը ծածկւած է մազերով. գլխի առջևի մասը կոչւում է դեմք կամ երես. դէմքի վրա գտնւում են մեր երկու աչքերը, երկու ականջները, քիթը և բերանը:


Իրանը մեր մարմնի միջին մասն է. նա բաղկացած է կրծքից, փորից ու մեջքից. իրանի ներսում կան երկու խոռոչներ. զբանցից մէկը կոչւում է կրծքի խոռոչ, իսկ միւսը՝ փորի խոռոչ:

Ձեռներով մենք գրում ենք, կարում ենք, չափում ու ձևում ենք և կերակուր ենք տանում մեր բերանը:

Ոտներով մենք ման ենք դալիս, վազում ենք ու թռչկոտում:

### ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

**ՄԱՇԿ:**—Մեր մարմինը ծածկւած է մաշկով, որին սուրբաբար ասում ենք կաշի: Մաշկը մեր մարմինը պաշտպանում է ցրտից, շոգից և ֆուսուսներից: Մաշկի վրա լինում են մանր մազեր: Երբ մենք շոգում ենք, մեր մաշկը թացանում է և նրա վրա գոյանում են ջրի կաթիլներ. դրանց ասում են քլորիսը:



**ԿՄԱՆՔ:**—Երբ մենք մատներով շօշափում ենք մեր ձեռներն ու ոտները, նկատում ենք ինչ որ կոշտ բաներ. դրանք ոսկրներ են: Ոսկրներն սպիտակ գոյն ունին, կոշտ ու դիմացկուն են. նրանց վրա են հաստատւած մեր մարմնի միւս մասերը: Մեր մարմնի ոսկրները բազմաթիւ են. նրանք բոլոր միասին կոչւում են կմախք:

Կմախքի մասերն են՝ առաջին—գլխի ոսկրները, որոնցից նշանաւոր են գանգի և դեմքի ոսկրները. իսկ դէմքի ոսկրներից նշանաւոր են ծնօտների ոսկրները:

Երկրորդ— իրանի ոսկրները, որոնցից նշանաւոր են

Կմախքն առջևի կողմից. այս նկարի վրա ոսկրները նկարւած են այն կարգով, ինչ կարգով նրանք դաստարւած են մեր մարմնի մէջ.

• ողնաշարը, կողերն ու կոնքը:

Երրորդ— ձեռների ու ոտների ոսկրները:

Մտօտների վրա գտնւում են մեր ատամները. առջևի սուր ատամները կոչւում են կտրիչներ. նրանց կողքերի սրածայր ատամները կոչւում են ժանիքներ. իսկ յետևի լայն ատամները՝ սեղանաւորներ:

Ողնաշարը կազմւած է մի շարք օղանման ոսկրներից. ողնաշարը գնում կաչում է գանգին. գանգի մէջ կայ մի խոռոչ, իսկ ողնաշարի մէջ՝ մի երկար խողովակաձև անցք, այս անցքը միացած է գանգի խոռոչի հետ:

Ձեռներն ու ոտները բաղկացած են մի քանի ոսկրներից, որոնք իրենց ծայրերով միացած են իրար հետ:

Այն տեղը, ուր երկու ոսկրների ծայրերը միացած են իրար, կոչւում է յստղ կամ յօղ. այդպիսի յօղեր կան մեր ուսերի, արմուճկների, ծնկների մէջ, մեր ոտների ու ձեռների թաթերի և մատների մէջ: Եթէ մեր ձեռները չունենային յօղեր, մենք չպիտի կարողանայինք նրանց ծալել ու բացել. նոյնպէս մեր ոտները եթէ չունենային յօղեր, մենք չպիտի կարողանայինք ման գալ, վազել և թռչկոտալ:

**ՄԿԱՆՆԵՐ:**—Շօշափելով մեր ձեռներն ու ոտները, ոսկրներից բացի մենք նկատում ենք նաև փափուկ մասեր. այդ մեր միսն է. դրանց անւանում են մկաններ: Մկանները տարածւած են մեր մարմնի բոլոր մասերում. նրանք լցնում են մեր կմախքի փոս տեղերը և մարմնին զեղեցկութիւն են տալիս: Բացի այդ, մկանների օգնութեամբ է, որ մենք կարողանում ենք մեր ձեռներն ու ոտները շարժել, ծալել, գանազան աշխատանքներ կատարել և ման գալ ու թռչկոտալ: Մկաններն անգործ մնալուց թոյլ են լինում, իսկ աշխատելուց ամրանում և ու-

ժեղանում են, այդ պատճառով աշխատող մարդիկ ունենում են ուժեղ ձեռքեր, ինչպէս դարբինը:

Կերակրի միան ուտելիս շատ անգամ տեսնում ենք, թէ ինչպէս փափուկ մսի կտորները կազմեած են լինում բարակ և երկայն թելերի խուրձերից, որոնք վերջանում են ամուր ջիւղերով: Մեր մկանների մեծ մասն իրենց ծայրերին ունին նոյնպիսի ջիւղեր, որոնցով նրանք ամուր կրպած են մեր ոսկրների ծայրերին. մեր կամքի համաձայն մկանները կծկւում, կուչ են գալիս և իրենց հետ քաշում, շարժում են մեր ոսկրները: Եթէ մենք մեր մերկ թեր բարձրացնենք ու իջեցնենք, ծալենք ու բացենք, կ'ատենենք թէ ինչպէս մեր թևի մկաններն արմունկից վերև մէկ կծկւում, գունդ են դառնում, մէկ էլ բացւում, ձգւում են:



Ձեռքի մկանը կծկեած.

ԱՐԻԻՆ:—Մեր մարմնի մէջ, ոսկրներից ու մկաններից բացի, կայ նաև արիւն: Կարմիր արիւնը բոլորիս ծանօթ է. մենք տեսել ենք նրան հաւր մորթելիս, կամ մէկն ու մէկի ձեռքը դանակով կտրեած ժամանակ:


Սրիւնը ջրի պէս հեղուկ նիւթ է և տարածւած է մեր մարմնի մէջ շատ բարակ մազանման խողովակների միջոցով. նա տարածւած է մեր մարմնի բոլոր մասերում: Եթէ ասեղի ծայրով ծակենք մեր մարմնի որ և է մասը, այդ տեղից դուրս կ'գայ արիւն: X

### ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ.

ՄՆՆԳԱՌՈՒԹԻՒՆ:—Իւրաքանչիւր օր, այն էլ օրը մի

քանի անգամ, մենք ուտում ենք հաց, միս, ձու, կաթ, կանաչի և այլ բաներ. դրանք կոչւում են կերակուր:

Կերակուրը նախ և առաջ տանում ենք մեր բերանը, առամներով լաւ ծամում, մանրացնում ենք և ապա կուլ տալիս. ծամած կերակուրը բերանից մտնում է մի երկար խողովակի մէջ, որ կոչւում է որկուր: Որկորից կերակուրը թափւում է մի պարկի մէջ, որ կոչւում է ստամոքս, իսկ ստամոքսից անցնում է աղիքների մէջ. աղիքներ ասածը իրար վրա դարուած մի շատ երկար խողովակ է: Ստամոքսն ու աղիքները գտնւում են փորի խոռոչում:




Ստամոքս և աղիքներ.

Կերակուրը մեր բերանի, ստամոքսի և աղիքների մէջ ենթարկւում է փոփոխութիւնների: Նրան խառնւում են զանազան հեղուկներ: Այդ հեղուկներից մէկը մեր բերանի թուքն է. կերակուրը ծամելու ժամանակ թուքը խառնւում է կերակրին ու նրա հետ կուլ է գնում: Այդպիսի հեղուկներ գոյանում են նաև մեր ստամոքսի ու աղիքների մէջ: Այդ հեղուկներից ամենայայանին դառը յետին է, որը շնարկից գալիս թափւում է աղիքների մէջ ու խառնւում կերակրին:

Ահա այս հեղուկները, խառնելով կերակրին, նրան փափկացնում ու հալեցնում են և հեշտութեամբ մարսեցնում: Մարսած կերակրից պատրաստւում է մեր արիւնը. իսկ արիւնից անուց են ստանում մեր մկաններն ու ոսկր-

ները: Այս գործողութիւնը կոչուած է սննդառութիւն: Առանց սննդառութեան մենք չենք կարող ապրել:

**ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ:**—Մենք շարունակ ու անդադար շնչում ենք: Ամեն անգամ երբ մենք շնչում ենք, մեր կուրծքը բարձրանում է ու ցածրանում. մեր կրծքի բարձրանալու ու ցածրանալու հետ լայնանում ու սեղմւում են մեր թոքերը. իսկ թոքերի լայնանալն ու սեղմւելն ա-



Շնչափող և թոքեր.

ռաջ է գալիս մեր շնչելուց: Թոքերն երկու հատ են՝ իրար կպած, և գրտնւում են կրծքի խոռոչում. նրանք կազմւած են անթիւ մանր՝ սպունգի պէս սեղմւող ու բացւող փամփուշտիկներից ու խողովակներից, որոնց պատերի մէջ տարածւած են մազանման արիւնատար անոթներ: Ամեն անգամ, երբ մենք շնչում ենք, դրսի օդը մեր քթածակերով ու բերանի միջով մտնում է շնչափողի մէջ, շնչափողից՝ թոքերի մէջ, ուր խառնւում է արեան հետ, և նոյն ճանապարհով էլ դուրս է գալիս: Ամեն անգամ, երբ դրսի օդը մտնում է թոքերի մէջ, թոքերը ուռչում, մեծանում են, իսկ երբ ներսի օդը դուրս է գալիս, թոքերը փոքրանում, կուչ են գալիս:


Շնչելով մենք երկու գործողութիւն ենք կատարում. մէկ՝ որ դրսի օդը ներս ենք շնչում. դա կոչուած է սննդառութիւն. իսկ միւսը, որ ներսի օդը դուրս ենք շնչում. դա կոչուած է արտաշնչութիւն:

Ներշնչած օդը մտնելով թոքերի մէջ և խառնելով արեան հետ, այնտեղ թողնում է մեր մարմնին օգտակար մասնիկներ, և արիւնից ընդունելով մեր մարմնին վնասակար մասնիկները, դուրս է գալիս. այնպէս որ մեր ներշնչած ու արտաշնչած օդերն իրար նման չեն. դրանցից առաջինը մեզ համար օգտակար է, իսկ երկրորդը՝ վնասակար է, նոյն իսկ թունաւոր: Եթէ մենք տաս-քսան մարդով մտնենք մի սենեակ, և սենեակի դռներն ու լուսամուտներն ամուր փակենք ու այդպէս մի քանի ժամ մնանք, մեր արտաշնչած օդից սենեակի օդն այնքան կ'փատանայ, որ մենք գլխացաւ կ'ստանանք. իսկ եթէ շարունակենք երկար մնալ այդպիսի օդի մէջ, կ'մեռնենք, ինչպէս որ կ'մեռնենք, եթէ մեր բերանն ու քթածակերը փակենք և թոյլ չ'տանք, որ դրսի օդը ներս գնայ:

Մեր թոքերի այդ գործողութիւնը կոչուած է շնչառութիւն: Ինչպէս որ առանց սննդառութեան մենք չենք կարող ապրել, այնպէս էլ առանց շնչառութեան չենք կարող ապրել:

**ԱՐԵՍՆ ՇՐՉԱՌՈՒԹԻՒՆ:**—Մարդու սիրտը մի գնդաձև մկան է, որ գտնւում է կրծքի խոռոչի ձախ կողմում և կպած է երկու թոքերի մէջտեղից: Սիրտը շարունակ կծկւում ու բացւում է. այդ կծկւելուն ու բացւելուն ասում ենք սրտի խփոց. սրտի խփոցը մենք կ'նկատենք, եթէ ձեռքներս դնենք մեր կրծքի ձախ կողմի վրա: Սիրտն ունի խորշեր, որոնցից զէպի թոքերն ու մարմնի միւս մասերը տարածւում են խողովակներ: Այդ խողովակները, սրտից աւելի ու աւելի հեռանալով, բաժանւում են մանր խողովակների և հասնում են մեր մարմնի ամենահեռաւոր ծայրերը՝ բարակ մազանման խողովակներով: Ահա սրտի խորշերի և նրանցից տարածւող այդ բազմաթիւ-

խողովակների միջով շարունակ վազում է մեր մարմնի մէջ արիւնը: Արիւնը մեր մարմնի գլխաւոր սնունդ աւուրն է. նա շարունակ շարժուում է, գնում ծծուում է մեր մկանների մէջ և տարածուում է մեր մաշկի տակ. նա ամեն տեղ իրենից թողնում է մեր մարմնի համար օգտակար մասնիկներ. և հաւաքելով մեր մարմնի համար վնասակար մասնիկներն ու կեղտոտելով, յետ է դառնում դէպի սիրտը: Ապա այս կեղտոտած արիւնը սրբտից գնում է թոքերի մէջ, այնտեղ խառնուում է օդի հետ. նրան տալիս է վնասակար մասնիկները և օգտակար մասնիկներ ընդունելով նրանից




Սիրտը եր արեւոտար անցքերով. ու մաքրւելով, նորից դառնում է դէպի սիրտը:

Արեան այս բոլոր շարժումները կատարւում են մեր սրտի օգնութեամբ: Սիրտը կծկւելով ու բացւելով իր միջի արիւնը ուժով դուրս է շարժում, իսկ դրսից եկած արիւնը ներս է ընդունում: Այն մեծ ու մանր խողովակները, որոնց միջով վազում է արիւնը, կոչւում են արիւնաւատար ւաւօթմեր: Սրանք լինում են երկու տեսակի. մի բանիսը, որոնք սրտից արիւնը տանում են դէպի մարմնի զանազան մասերը, կոչւում են զարկերակներ. իսկ միւսները, որոնք մարմնի զանազան մասերից արիւնը հաւաքում բերում են դէպի սիրտը, կոչւում են երակներ: Այսպիսով զարկերակների և երակների միջով անընդհատ հոսում է արիւնը: Անմաքուր արիւնը լինում է մուխ գոյնի. եթէ ուշադրութեամբ նայենք մեր

ձեռքի բիրակի վրա, կ'նկատենք կապտագոյն երակներ. դրանք մեր մաշկի տակ տարածւած երակներն են, որոնց միջով հոսում է անմաքուր արիւնը:

Արեան և սրտի կատարած այդ գործողութիւնը կոչւում է արեան շրջանաւորութիւն: Ինչպէս որ առանց սննդաւորութեան և շնչաւորութեան մենք չենք կարող ապրել, այնպէս էլ առանց արեան շրջանաւորութեան չենք կարող ապրել:

ՈՒՂԵՂԸ ԵՒ ՆԵՍՐԴԵՐԸ:— Երբ մենք ուզում ենք մի տեղ գնալ, նախ մտածում ենք, Վճուում, և ապա գնում: Նոյնպէս երբ ուզում ենք մի գործ կատարել, նախ մտածում ենք, Վճուում և ապա կատարում:



Այս բանին մենք ասում ենք՝ խելքով բան անել, մտածել. մենք մտածում ենք ուղեղով, իսկ ուղեղը գտնուում է գլխի մէջ, այդ պատճառով էլ ասում են խելքը գլխի մէջ է:

Ուղեղը փափուկ մի գունդ է և գտնուում է մեր գանգի խոռոչում. դրան ասում են՝ գլխի ուղեղ. բայց կայ և մեջքի ուղեղ. սա բարակ ու երկարուկ է, գտնուում է ողնաշարի խողովակաձև անցքի մէջ և մի ծայրով կպած է գլխի ուղեղին:

Գլխի և մէջքի ուղեղներից նեարդերը տարածւում են ամբողջ մարմնի մէջ:

Գլխի և մէջքի ուղեղներից գուրս են գալիս ու տա-  
րածուում են մեր մարմնի բոլոր մասերում սպիտակ բարակ  
թելիկներ. այդ թելիկները կոչուում են *անարդեր*. նեարդե-  
րի ծայրերը գնում միանում են մեր մկաններիս ու մաշ-  
կին: Նեարդերը մեր մարմնի համար երկու տեսակ պաշ-  
տոն են կատարում: Նրանցից մի քանիսը մեր ուղեղի հրա-  
մանները տանում հասցնում են մեր մարմնի հեռավոր ծայ-  
րերին. իսկ միւսները մեր մարմնի զանազան ծայրերից  
սպաւորութիւնները տանում հասցնում են ուղեղին. օրի-  
նակ, երբ մենք ասեղի ծայրով ծակում ենք մեր մարմնի  
որ և է տեղը, ասեղի ծայրը կպչում է մեր մաշկի տակ  
եղած նեարդին. նեարդը այդ ծակոցը հաղորդում է ուղե-  
ղին և ապա՝ մենք ցաւ ենք զգում: Այդ ցաւ զգալուն ա-  
տում են՝ *զգացողութիւն*: Զգացողութիւնն այնքան արագ է  
կատարւում, որ մենք այդ չենք նկատում:

Բացի այդ, նեարդերի օգնութեամբ է, որ ուղեղն ստա-  
նում է լոյսի, ձայնի, համի ու հոտի զգացողութիւններ:  
Առանց ուղեղի և նեարդերի մենք չենք կարող տեսնել,  
լսել, համ ու հոտ առնել, չենք կարող իմանալ, թէ ինչ է  
կատարւում մեր շրթս կողմը:

**Մեր Հինգ ՉԳԱՅԱՐԱՆՆԵՐԸ.**— Մինչև այժմ մենք  
ծանօթանում էինք մեր մարմնի հետ. բայց մեր մարմնից  
գուրս կայ աշխարհ, որի վրա ապրում են մարդիկ, կեն-  
դանիներ ու թռչուններ, բուսնում են ծառեր ու ծաղիկ-  
ներ, ուր կան սարեր, գետեր ու ծովեր, որտեղ լինում  
են քամիներ, անձրև, արև ու խաւար:

Մենք ծանօթանում ենք աշխարհի հետ, տեսնելով  
նրա վրա գտնւող իրերը, լսելով մեր շուրջը հնչող ձայ-  
ները, հոտառելով ծաղիկների հոտը, ճաշակելով պտուղ-  
ների ու կերակրի համը, շօշափելով մեզ շրջապատող ա-

ռարկաները և զգալով շոգն ու ցուրտը: Այսքան տեսակ-  
տեսակ ծանօթութիւններ ստանալու համար մեր մար-  
մինն ունի գործարաններ, որոնք կոչուում են. *զգայարան-  
ներ*. — տեսնելու համար մենք ունինք տեսողութեան զգայա-  
րան. դա մեր *աչքերն* են. լսելու համար ունինք լսողու-  
թեան զգայարան. դա մեր *սկիւնջներն* են. հոտ առնելու  
համար ունինք հոտառութեան զգայարան. դա մեր *քիթն*  
է. համն իմանալու համար ունինք ճաշակելիքի զգայարան.  
դա մեր *լեզուն* է. շօշափելու համար ունինք շօշափողու-  
թեան զգայարան. դա մեր *մաշկն* է:

1243 82

Իւրաքանչիւր զգայարան ունի իր յատուկ նեարդերը.  
դրանք կոչուում են տեսողութեան, լսողութեան, հոտառու-  
թեան, ճաշակելիքի և շօշափելիքի նեարդեր: Այդ նեար-  
դերը մի ծայրով կպած են տեսողութեան, լսողութեան,  
հոտառութեան ու ճաշակելիքի գործարաններին, և մաշկին,  
իսկ միւս ծայրով միացած են ուղեղին: Մինչև որ այդ նեար-  
դերը մեր զգայարանների ստացած սպաւորութիւնները  
չ'հաղորդեն ուղեղին, մենք չենք կարող տեսնել, լսել, հոտ  
ու համ առնել, շոգն ու ցուրտն զգալ:

Իսկ այս ամենը մեր մարմնի համար նոյնքան կարե-  
ւոր է, որքան սննդառութիւնը, շնչառութիւնը և արեան  
շրջանառութիւնը:



## ԿԵՆՊԱՆՆԻՆԵՐ

Երկրի վրա մարդուց բացի ապրում են նաև կենդանիներ. կենդանի ասում ենք նրա համար, որ նրանք էլ մարդու պէս ծնւում, մեծանում, ծերանում ու մեռնում են և մարդու պէս ուտում, խմում, շարժւում ու մահ են գալիս:

Կենդանիները շատ շատ են և տեսակ-տեսակ. նրանց մեծ մասն ապրում է սարերում, ձորերում և անտառներում. դրանք կոչւում են վայրենի կենդանիներ: Բայց կան և այնպիսի կենդանիներ, որոնք ապրում են մեզ հետ միևնոյն պարտիզում, բակում և միևնոյն սենեակում. դրանք կոչւում են ընտանի կենդանիներ: Ընտանի կենդանիներից մէկն է շունը:

## Շ Ո Ւ Ն

Շունը, ինչպէս և մարդը, ունի գլուխ, իրան, իսկ մարդու երկու ձեռների ու երկու ոտների փոխարէն ունի չորս ոտ. նա ունի նաև պոչ:

Շան մարմինը երկարուկ է, գլուխը փոքր, դունչը սուր. ոտները բարակ են, ձկուն և վերջանում են փափուկ մասներով, իսկ մասները վերջանում են ճանկերով: Շնորհիւ այսպիսի կազմւածքի, շունն աշխոյժ և արագավազ կենդանի է:

Շունը կերակրւում է գլխաւորապէս հում մսով և սակրներով. այդ պատճառով էլ նրա ատամները սուր են

ու ծլատող. ծլատող են մանաւանդ նրա կտրիչ և ժանիք ատամները, որոնք միևնոյն ժամանակ շան պաշտպանութեան գէնքն են:

Շան մի քանի զգայարաններն աւելի են զարգացած քան մարդու զգայարանները. օրինակ, նրա աչքերը տեսնում են նաև գիշեր ժամանակ, իսկ ականջները լսում են ամենափոքր շշուկն անգամ. բաւական է, որ մէկը շատ կամացուկ, նոյն իսկ բլթերի վրա քայլելով անցնի քնած շան մօտով, շունն իսկոյն կ'զարթնի: Շներին աւելի ևս արթուն դարձնելու համար գիւղացիք կտրում են նրանց ականջների կախ ընկած մասերը:



Շունը հստակիս.

Բայց ամենից զարգացած զգայարանը շան հոտատելիքն է: Շան դունչը թաց է լինում, նա իր թաց գնչով կարողանում է գզալ շատ հեռուից տարածւող հոտը. նա տիրոջ անցած ճանապարհը հոտատելով կարողանում է նրա յետևից գնալ և գտնել նրան: Նա հոտատելով նոյն իսկ կարողանում է թաղցրած իրերը գտնել և հանել սղանած տե-

ղից: Զարգացած է մանաւանդ որսորդական շների հոսա-  
ուութիւնը. նրանք հոտառութեամբ խմանում են որսի տե-  
ղը և թոցնում են նրանց, իսկ խփած որսը գանում բերում  
են, տիրոջը տալիս:

Շներն սկզբում եղել են վայրենի. նրանք ցեղակից  
են գայլերին ու ագւէսներին: Մարդը նկատելով շան մէջ  
խելք և ընդունակութիւն, նրան ընտելացրել և դարձրել է  
իր ընկերն ու օգնականը:

Նւ խկապէս, շունը խելացի, հաւատարիմ, զգայուն և  
օգտակար կենդանի է.—նայելով իր տիրոջ գէմքին, նա  
կարողանում է խմանալ նրա միտքը. հեշտութեամբ սովոր-  
ում է գանազան ծառայութիւններ կատարել. օրինակ,  
բերանով մթերք է տուն տանում: Շունը միեւնոյն ժամա-  
նակ գիտէ սիրել իր տիրոջը. փաթաթում է նրա ոտնե-  
րին կամ թաւալ է տալիս նրա ոտների տակ, երբ տէրը  
մի քանի օր բացակայելուց յետոյ վերադառնում է տուն:  
Շատ ժամանակ շներն իրենց տիրոջը դժբախտութիւնից  
ազատելու համար վտանգի են ենթարկում իրենց: Բացի  
այդ, շունը պաշտպանում է տունը զոգերից և ոչխարի  
հօտը՝ գայլերից: Մի քանի տեղերում շներին լծում են,  
նրանց միան ուտում, մորթուց հազուստ են պատրաստում  
և բուրդը բանեցնում:

Շունը ծնում է 4—10 ձագ. առաջին 12 օրը ձա-  
գերը կոյր են լինում. իր ձագերին նա կերակրում է իր  
կաթով: Շներն ապրում են 12—15 տարի:

Ինչպէս բոլոր կենդանիները, այնպէս էլ շունը են-  
թակայ է հիւանդութիւնների: Այդ հիւանդութիւններից  
մէկը կոչւում է կատարութիւն, կատաղած շան կծելուց  
մարդիկ վարակւում են, բայց բժշկական օգնութեան դի-  
մելով կարելի է լինում բժշկել:

## Կ Ա Տ Ո Ի

Ընտանի կենդանիներից մէկն էլ կատուն է, մեր բո-  
լորիս մանկութեան խաղընկերը:

Կատուի գլուխը կլոր է, ախանջները փոքր են ու շար-  
ժուն, դունչը բութ է. մէջքը ձկուն է և պոչը երկար.  
Ոտներն ուժեղ են ու կարճ և վերջանում են փափուկ  
մատներով ու սուր-սուր ճանկերով: Շնորհիւ այսպիսի  
կազմաւածքի, կատուն շատ աշխոյժ շարժումներ է կատա-  
րում, մեծ թռիչքներ է գործում և լաւ մագլցում. բացի  
այդ, շնորհիւ մէջքի ձկունութեան, նրան ինչպէս էլ վայր  
զցելու լինենք, նա մէջքի վրա չի ընկնի, այլ բոպէսպէս  
պտոյտ կ'զայ, կ'ընկնի ոտների վրա և ամուս կ'մնայ:



Կատուն և իր որսը.

Կատուի սիրելի կերակուրն է հում միսը, առանձնա-  
պէս կենդանի մկներ, թէև նա ուտում է նաև կաթնեղէն:  
Կատուի համար ինչպէս զէնք ծառայում են նրա

սուր ճանկերը, որոնք այնպիսի յատկութիւն ունին, ոյ ման գալու ժամանակ ներս են քաշուում, որ չբթանան Սյդ ճանկերով նա բռնում է իր որսը և ծւատում նրան, ուրբեր բարկացնում են նրան:

Կառւի մի քանի զգայարաններն աւելի զարգացած են, քան նոյն իսկ շան զգայարանները: Կառւի լսողութիւնն այնպէս սուր է, որ քնած ժամանակ նա կարողանում է լսել մկան ամենափոքր շարժումն անգամ և բարկացնուի վեր է թռչում: Կատուն գիշեր ժամանակ աւելի լաւ է տեսնում, քան նոյն իսկ ցերեկը. նրա աչքերի բերան այնպիսի յատկութիւն ունին, որ ցերեկը, մանաւանդ արև եղած ժամանակ, նեղանում, ուղղահայեաց մի գիծ են դառնում, իսկ գիշերները լայնանում, բացում են: Նրա տեսողութիւնը զարգացել է շնորհիւ այն բանի, որ նա մկներին որսում է գիշերները մթութեան մէջ:

Կատուն վերին աստիճանի զգոյշ, խորամանկ և ճարպիկ կենդանի է: Մկանը տեսնելիս նա երբեք չի շտապում, այլ կուշ գալով, քնած է ձևանում, մինչև որ մուկը հեռանում է բնից. այդ ժամանակ նա մի ոտիւնով վրա է պրծնում և մկանը ճանկում: Կատուն գիտէ նաև իր որսով զւարճանալ. երբ մկանը բռնում է, նախ քան ուտելը, նրա հետ խաղում է, այսինքն այնքան է շարժարում, մինչև որ մուկը հոգին տալիս է. այստեղից վերցրած՝ ասում են—«կառւին խաղ է, մկանը մահ է»:

Կատուն շատ մաքրասէր է. նա իր լեզուով մաքրում է իր մազերը. առաջին ոտների թաթերը լեզուով թացացնելով, սղալում է երեսը: Կատուն սիրում է նաև տաքութիւն. նա ձմեռները տեղաւորւում է վառարանների մօտ և թոնիրների շրթերին:

Կատուն, ինչպէս և շունը, սկզբում եղել է վայրենի. նա ցեղակից է առիւծին և վագրին. մինչև այժմ էլ կան

վայրենի կատուներ: Մարդն բնաւթացրել է կառւին՝ կներից ազատելու համար: Ինչ տուն որ կատու ունեայ, այնտեղ մուկ չի մնայ:

Կատուն ամեն անգամ ծնում է 4—6 ձագ, որոնք առաջին 7—8 օրը կոյր են լինում. կատուն իր ձագերին կերակրում է իր կաթով, և նրանց պահում է մեծ խնամով. եթէ նկատի իր ձագերի համար որ և է վտանգ, իսկ նյն բերանն առած նրանց մէկիկ-մէկիկ կ'տեղափոխի արիշ տեղ: Երբ ձագերը մեծանում են, մայրը նրանց սովորեցնում է մուկ որսալ: Կատուներն ապրում են մինչև 15 տարի:

Կատուները շատ տեսակ են լինում. մեզանում ամենալաւերը համարւում են վանայ բրգոտ կատուները:


Կատուն, շունը և այն բոլոր կենդանիները, որոնք կերակրւում են մսով, կոչւում են մսակեր կամ գիշապիւ կենդանիներ:

## Մ Ո Ւ Կ

Տնային մուկը փոքրիկ կենդանի է: Նրա մարմինը երկարուկ է ու ճկուն, թէև նստած ժամանակ կլորակ է երևում. գլուխը փոքր է, գունչը սուր, պոչը երկար ու շարժուն. ոտները մանր են, բայց ճանկերով զինւած: Իրանց շնորհիւ նա կարողանում է ծակել պատերը, ճանապարհ բացել սենեակից սենեակ ու անից տուն և վազվզել ամեն կողմ. նա ճարպիկ կերպով մագլցում է առարկաների վրա, պատերի միջով բարձրանում է առաստաղները և իր բունը շինում է այնպիսի տեղում, որ նրան գտնելը շատ դժւար է:

Մուկն ունի սուր լսողութիւն, սրատես աչքեր, լաւ հոտառութիւն և զգայուն բերան: Միևնոյն ժամանակ նա

շատ զգոյշ կենդանի է. այդ պատճառով նա բնից դուրս է գալիս գլխաւորապէս գիշերները, և մթութեան մէջ կերակուր պտրտում:



Մուկը հատուկիս.

Մուկն ուտում է այն բոլորը, ինչ որ մարդն է ուտում. նա կրում տանում է ամբարած ցորենը, գարին ու տան պաշարը. բայց նա կրծում է և այնպիսի բաներ, որոնց ուտել չի կարող. այսպէս, նա ատամներով կտրում փշացնում է հագուստներ, գրքեր, ամեն ինչ, նոյն իսկ պահարանների սաները: Եւ անա թէ ինչու:

Մուկն ունի ընդամենը 16 ատամ, որոնցից 12-ը սեղանատամներ են, իսկ չորսը միայն կտրիչներ՝ երկուսը վերին ծնօտի վրա, երկուսը՝ ցածի ծնօտի վրա. նա ժանիքներ չունի: Կտրիչները շատ ամուր են և դուրի պէս սուր. անցքեր բացելու համար նա իր կտրիչներով կրծում է ամեն մի պատահած իր, որից նրանք մաշում են, բայց միևնոյն ժամանակ մկան կտրիչներն ունին երկարելու յատկութիւն, և եթէ նրանք մի կողմից չմաշեն, այնքան կ'երակրեն, որ մուկն այլ ևս չի կարող բերանը շարժել: Ահա երկարող կտրիչները մաշելու համար մուկը շատ անգամ կրծում է այն բոլորը, ինչ որ ընկնում է նրա ձեռքը.

երկաթն ու քարը միայն ազատ են նրա ատամներից: Այսպիսով մուկը մարդկանց հասցնում է մեծամեծ վնասներ. իսկ մարդիկ մկներին ոչնչացնելու համար շող են տալիս թոյն, դնում են թակարդներ և պահում են կատուներ:

Աւելի վնասակար են դաշտային մկները. սրանք երբեմն այնքան են բազմանում, որ սկսում են անխնայ կրտել ցորենի հասած արտերը և սով են առաջացնում:

Մկները և նրանց պէս կրծելու յատկութիւն ունեցող ուրիշ կենդանիները կոչւում են կրծողներ:

Մուկը տարեկան 5—6 անգամ ձագ է բերում, այն էլ իւրաքանչիւր անգամ 6—8 հատ, այնպէս որ, մի տարւայ մէջ մի արու և մի էգ մկնից առաջ են գալիս մի քանի հարիւր մկներ: Այսպէս արագ բազմանալու շնորհիւ է, որ չնայած այնքան կոտորածներին, մուկը կարողանում է իր սերունդը պահել: Մկան ձագերն առաջին մի քանի օրը կոյր են լինում և երեք շաբաթ կերակրւում են իրենց մօր կաթով:

Զ Ի

Ընտանի կենդանիներից ամենից խելացին, գեղեցիկն ու օգտակարը ձին է:


Ձիու գլուխը փոքր է, պարանոցը կողքերից սեղմւած, իրանը երկարուկ ու բոլորակ, պոչը երկար մազերով ծածկւած, ստները բարակ ու շարժուն:

Ձիու խելացի աչքերը, գեղեցիկ բաշը, կոկ ու փայլուն մազերը, ազատ փուռոց պոչը և մարմնի բոլոր մասերի համաչափութիւնը նրան տալիս են սիրուն տեսք:

Ձին կերակրւում է խոտով. նրա կտրիչ ատամները լայն են և եզրները սուր, որոնցով բռնում պոկում է կանաչը. իսկ սեղանատամները տափակ են ու խորդ ու բորդ.

սեղանատափներն իրար քսելով տրորում ու մանրացնում են խոտը:

Ձիու մի քանի զգայարանները բաւականին զարգացած են. նա ունի շարժուն ականջներ և սուր լսողութիւն. գիշեր ժամանակ նա լսում է հեռուոր շշուկներն անգամ և զգուշանում է վտանգներից: Շնորհիւ իր զգայնութեան և սուր տեսողութեան, նա վարպետօրէն, նոյն իսկ գիշեր ժամանակ, անցնում է դժւար, քարքարոտ ճանապարհները: Շատ զարգացած է մանաւանդ ձիու յիշողութիւնը. մի անգամ անցած ճանապարհը նա երկար տարիներ անցնելուց յետոյ էլ յիշում է:



Ձի.

Ձիու ոտները վերջանում են մի-մի մատով. նրանք պատած են ոսկրանման սմբակով. այդ տեղից էլ ձին կոշւում է միամշտական կեանքով: Սմբակը եղջիւրի պէս ամուր է, բայց որովհետեւ ձին շարունակ ճանապարհ է գնում, այդ պատճառով նրա սմբակների տակ պայտեր են խփում, որ նրանք շուտ չմաշւեն: Ձիու ոտները շատ

ուժեղ են և ծառայում են նրան որպէս պաշտպանութեան գէնք:

Ձին զգայուն, հաւատարիմ, խելացի և օգտակար կենդանի է.—նա ուրախ թուշկոտում ու խրխնջում է, երբ տէրը մէջքին նստած զբօսանքի է դուրս գալիս, իսկ երբ տիրոջը երկար ժամանակ չի տեսնում, տխրում է: Ձին հեշտութեամբ սովորում է զանազան շարժումներ կատարել, նոյն իսկ պարել. նա իր վարժութիւններով կրկէսների զարգն է կազմում: Որովհետեւ ձին արագաշարժ է, մարդիկ ձիով են զբօսանքներ ու ճանապարհորդութիւններ կատարում: Իր ձկուն և ուժեղ մէջքով ձին կրում է ծանր բեռներ. իր ուժեղ կրծքով քաշում է սայլեր ու կառքեր և պտտեցնում է մեքենաների անիւները: Ձիու այսչափ ուժը նրանից է, որ նա ունի ամուր ոսկրներ, գլխից մինչև պոչը տարածւող ձկուն ու դիմացկուն ողնաշար, և ուժեղ մկաններ:

Ձիու միսը շատ տեղերում ուտում են, կաշուց պատրաստում են սանամաններ, բաշի և պոչի մազերից գործում են մազեր, իսկ կաթը իբրև գեղ խմացնում են թոքախտաւորներին:

Ձին ամեն անգամ ծնում է մի քուռակ, որը ծնւելուն պէս սկսում է ման գալ: Քուռակը 5—6 ամիս կերակրւում է մօր կաթով և մի տարուց աւելի ման է գալիս մօր յետևից: Ձին ապրում է մօտ 30 տարի:

Ձիերի տեսակները շատ են. ամենայայտնի տեսակը արաբականն է, մեզանում՝ յայտնի է զարաբաղի նժոյգը:

Ձիուն ցեղակից է էշը: Էշի մարմինը փոքր է, գլուխը մեծ, ականջները երկար և ձայնն անախորժ: Էշը յիմար կենդանի է. բայց չնայած այդ բոլորին, նա իր զգոյշ քայլածքի շնորհիւ համարւում է լաւ բեռնակիր գրաստ՝

մանաւանդ լեռնոտ երկրներում, ուր ճանապարհները լինում են անկանոն և քարքարոտ:

### Կ Ո Վ

Կովը ամենաօգտակար ընտանի կենդանիներից մէկն է: Կովի գլուխը մեծ է, ճակատը լայն է ու տափակ, պարանոցը հաստ է, բայց կողքերից սեղմւած, իրանը մեծ է, պոչը երկար և ծայրին ունի մի փունջ մազ: Կովն աչքի է ընկնում իր կուրծով, որ կախ է ընկած փորի տակ յետին ոտների մօտ: Կովերը լինում են կարմիր, սև, սպիտակ և այլ գոյնի:


Կովը գլխի վրա ունի մի գոյգ եղջիւր. դա նրա զէնքն է: Եղջիւրները ոսկրի պէս ամուր են և միացած են գանգի ոսկրներին: Եղջիւրների պատճառով կովը կոչւում է *տղջիւրատուր կեւորակի*:

Կովի ոտները վերջանում են երկ-երկու մատներով, որոնք պատած են ամբակներով, այդ պատճառով կովը կոչւում է նաև *նրկամբակակալի կեւորակի*: Երկու փոքրիկ մատներ էլ գտնւում են ոտի յետևի կողմում, բայց նրանք զարգացած չեն:

Կովը, ինչպէս և ձին, խոտակեր կենդանի է, բայց բերանի կազմութեամբ և մարսողութեան ձևով տարբերւում է ձիուց: Կովն ունի 24 հատ լայն ու տափակ սեղանատամներ և 8 հատ կտրիչ ատամներ, որոնք նոյնպէս լայն ու տափակ են և գտնւում են ցածի ծնօտի վրա. վերին ծնօտի վրա կտրիչներ չ'կան. նրանց փոխարինում է մի կոշտացած լնդանման կաշի: Այդ կոշտացած կաշիով և ցածի ծնօտի կտրիչ ատամներով կովն ամուր բռնում է կանաչ խոտը և քաշում պոկում է: Կովի ատամների դասաւորութիւնն այսպէս է.

6 — 6  
6 8 6

Կովը կերակուրը երկու անգամ է ծամում և ահա թէ ինչու: Կովը շատակեր և ծանրամարմին կենդանի է. նա արածելիս շուտ-շուտ է ուտում և կերածը կիսածամել կուլ է տալիս. երբ բաւական կերած է լինում, նստում է հանգստանալու, ծամած կուլ տւած կերակուրը նորից յետ է բերում բերանը, ծամում է և նորից կուլ տալիս: Երկու անգամ նոյն կերակուրը ծամելու և կուլ տալու համար կովն ունի յատուկ ստամոքս: Ստամոքսը բաղկացած է չորս մասից. առաջին անգամ ծամած կերակուրը գնում է ստամոքսի առաջին և երկրորդ մասերի մէջ. սպա այդ-



Կ Ո Վ.

տեղից կովը կերակուրը մաս-մաս յետ է բերում բերանը և երկրորդ անգամ լաւ ծամելուց յետոյ նորից կուլ է տալիս. այս անգամ կերակուրը թափւում է ստամոքսի երրորդ և չորրորդ մասերի մէջ: Կերակրի երկրորդ անգամ ծամելուն ասում են *որոնալ*. այդ պատճառով կովը և նրան ցեղակից կենդանիները կոչւում են *որոնալներ*:

Կովը ծնում է տարին մի հորթ. հորթը ծնւում է աչ-

քերը բաց և առաջին օրւանից սկսում է ման գալ. հորթը 5—7 ամիս կերակրում է մօր կաթով:

Կովի տւած օգուտները շատ մեծ են.—նա կազմում է մարդու անտեսութեան գլխաւոր աղբիւրը. նրա կաթով և կաթից պատրաստած իւղով ու պանրով կերակրում են մարդիկ. կան կովեր, որոնք իրենց առատ կաթով մի ամբողջ ընտանիք են ապրեցնում: Կովի միսն ու ճարպն ուտում են, կաշուց պատրաստում են սանամաններ, եղջիւրներից՝ գործիքներ, սմբակներից՝ սոսինձ, իսկ աղը վառում են կամ նրանով արտերն են պարարտացնում:

Կովի արուն եզն է, որ նոյնչափ օգտակար է մարդուն, որքան և կովը: Եզը կովից աւելի յաղթանդամ է և ուժեղ. ուժեղ է մանաւանդ նրա պարանոցը, որի վրա դնում են լուծը: Եզը քաշում է սայլերը, գութանն ու արօրը: Թէ եզն ու կովը որքան օգտակար և սիրելի են գիւղացուն, այդ երևում է նրանից, որ գիւղացին նրանց անւանում է «աղբէր եզը», «իմ բալէքին կերակրող կովը».—գիւղացու ընտանիքն օրերով սգում է, երբ նրա եզը կամ կովը մեռնում է:

## Ո Չ Խ Ա Ր

Ոչխարի մարմինը ծածկւած է բրդով, որը գարնանը խուզում են: Ոչխարը գլխի վրա ունի երկու փոքրիկ եղջիւրներ. իսկ արուները երբեմն ունենում են զարգացած պտուտակաձև եղջիւրներ, որոնցով կուտւում ու պաշտպանւում են: Ոչխարի պոչը կարճ է, իսկ մեր կողմերի ոչխարների պոչերն աւելի մեծ են լինում ու կախ ընկած. դրան ասում ենք դմակ. դմակն ամբողջապէս ճարպ է:

Չնայած այս տարբերութիւններին, ոչխարը շատ բաներով նման է կովին. կովի պէս նա սաներին ունի

երկու սմբակ. ունի նոյնպիսի ստամներ և կերակրում է խոտով. ունի նոյն ձևի ստամոքս և կերակուրը երկու անգամ է ծամում. ունի նոյնպիսի կուրծ և իր գառներին կերակրում է կաթով. հետևապէս, ոչխարը, ինչպէս և կովը, Երկամբակաւոր, խոտակեր, սրունայ և կաթնատու կենդանի է:



Սրու և եղ ոչխարներ.

Ոչխարը, շնորհիւ իր բրդի, սիրում է գոգ տեղեր. շնորհիւ իր սմբակների և զգոյշ քայլւածքի, կարողանում է բարձրանալ լեռների ամենաբարձր կատարները. այդ պատճառով էլ ոչխարները տարածւած են լինում գլխաւորապէս լեռնոտ տեղերում: Թէև լեռների խոտը կարճ է լինում, բայց ոչխարի շրթուները շատ բարակ են և կարելի ատամները դուրս պրծած, որոնցով և նա կարողանում է արածել ամենախարճ խոտն անգամ:

Ոչխարը շատ խեղճ, վախկոտ, պաշտպանութեան միջոցներից գուրկ և յիմար կենդանի է. բոււական է, որ մի

աղմուկ բարձրանայ, կամ ոչխարներից մէկը որ և է բանից խրտնի ու փախչի, նրան վայրկենապէս կ'հետեւի ամբողջ հօտը: Բաւական է, որ վտանգի ըոպէին մէկն իրեն ժայռից ցած նետի, նրա յետեից ցած կ'թափւեն և միւսները: Գայլ տեսնելիս, փոխանակ փախչելու, ոչխարները խմբուում, կանգնում են և ոտներով գետինը ծեծում:

Զնայած այս բոլորին, ոչխարը վերին աստիճանի օգտակար կենդանի է. մարդիկ նրանց վրա մեծ խնամք են տանում. նրա կաթից պատրաստում են իւղ ու պանիր, միսն ու ճարպն ուտում են. աղիքներից պատրաստում են լարեր, ամբակներից՝ սոսինձ. իսկ նրա բրդից պատրաստում են թաղիքներ, կապերաներ, գորգեր և ամենաազնիւ տեսակի մահուղեղէն ու շալեղէն գործածքներ:

Իր ազնիւ բրդով յայտնի է ոչխարների մի տեսակը, որ կոչւում է մերկնու:


Ոչխարները տարին մի անգամ գարնան սկզբին ծնում են մի կամ երկու գառ:

Ոչխարին շատ նման է այծը, բայց սա նրանից, համեմատաբար, խելացի է, ճարպիկ և յանդուզն. նա անվախ բարձրանում է ժայռերի ծայրերը, իր յետեից քաշում տանում է ոչխարի հօտը և միևնոյն ժամանակ զգուշանում է գազաններից: Այծերի այս ընդունակութիւններն ի նկատի առնելով, ոչխարի հօտերի հետ պահում են նաև այծեր, որոնք հօտի առաջն ընկած, նրան առաջնորդում են դէպի լեռները:

## Հ Ա Ի

Հաւն ընտանի թռչուն է. նա, ինչպէս և բոլոր թռչունները, տարբերում է մեր սովորած կենդանիներից իր կտուցով, փետուրներով և թևերով:

Հաւի գլուխը փոքր է. գլխի վրա գտնւում է ատամնաւոր կարմիր կատարը. կտուցի տակ կախ են ընկած երկու կարմիր բլթակներ: Մարմինը ծածկւած է փետուրներով. վրայի փետուրները մեծ են, իսկ տակի փետուրները՝ մանր ու փափուկ և կոչւում են բմբուլ. թևերը վերջանում են աւելի մեծ փետուրներով:



Հաւն իր ճտերով և արդաղը.

Հաւի մարմինը համեմատաբար մեծ է, իսկ թևերը կարճ են ու թոյլ, ուստի նա վատ է թռչում. այդ նրանից է, որ հաւը մարդկանցից խնամւելով ու կերակրւելով, կարիք չի ունեցել այս ու այն կողմը թռչելու և այդպիսով հետզհետէ կորցրել է թռչելու ընդունակութիւնը: Ոտներն ընդհակառակն ուժեղ են, որոնց շնորհիւ նա ամբողջ օրը ման է գալիս և աղբակոյտերը քլջում. ոտները վերջանում

են չորս-չորս մասներով, որոնցից երեքը գտնուում են առջևի կողմում, իսկ մեկը՝ յետևի. նրանք վերջանում են բուժ ճանկերով:

Հաւը կերակրւում է գլխաւորապէս հատիկներով, որոնց կուլ է տալիս առանց ծամելու. հատիկներ մարսելու համար նա ունի այլ ձևի տոամորքս. հատիկները նախ հաւաքւում են կոտամակի մէջ, որին շատ տեղերում ասում են թթռած. կտամանի մէջ բաւականաչափ փափկելուց յետոյ, հատիկները թափւում են ստամորքսի մէջ. դա րարձիկն է: Քարճիկի պատերը շատ հաստ են. այդ պատերն իրար քսելով կերակուրը տրորում, մարսեցնում են. մարսողութիւնը հեշտացնելու համար հաւերը կուլ են տալիս նաև աւազ, որը քարճիկի մէջ նպաստում է հատիկների տրորւելուն:

Հաւը բնի վրա նստել չի սիրում. նա գիշերում է մսուրների, ձողերի և ծառերի վրա. բայց նրան բուն հարկաւոր է ձու ածելու և ճտեր հանելու համար: Բունը շինում են խոտից. բնի վրա միշտ զրւած է լինում բնկալը. հաւը տարին կ'ածի մինչև 150 ձու. եթէ ածած ձուն բնից չ'վերցնեն, 15—20 ձու ածելուց յետոյ հաւը թուխս է նստում: Երեք շաբաթ շարունակ հաւն ամուր նստում է ձւերի վրա և իր մարմնով տաքացնում է նրանց. երեք շաբթից յետոյ ձւերի մէջ ճտեր են գոյանում, որոնք կացով ձւերի կեղեր ծակելով, դուրս են գալիս: Սկզբում նրանք ծածկւած են լինում աղւամազով, բայց ձւից դուրս գալով, խեղճն ման են գալիս և կերակուր ուտում:

Հաւը շատ օգտակար կենդանի է. նա կազմւում է մարդու անտեսութեանն արբիւրներից մէկը. նրա միսը մարդկանց ամենահամեղ կերակուրն է. նրա ձուով կերակրւում է թէ հարուստը և թէ աղքատը. նրա փետուրներից և բրմբուլից պատրաստում են փափուկ բարձեր:

Հաւի արուն արագաղն է. նա տարբերւում է հուից իր մեծութեամբ, ուժով, փետուրների գեղեցկութեամբ, աղեղնաձև պոչով և մեծ կատարով. այդպիսի առաւելութիւնների շնորհիւ, նա իշխում է հաւերի վրա և նրանց պաշտպանում է թշնամիներից. իբրև պաշտպանութեան զէնք նրան ծառայում է ոտի վրա գտնուող սրածայր յիթակը: Աքաղաղը յայտնի է իր վաղօրեայ ծուղրուղուցով. նա գիւղացու ժամացոյցն է: Երբ վաղ առաւօտեան արագաղաղը կանչում է, գիւղացին անմիջապէս դաշտ է դուրս գալիս իր աշխատանքը կատարելու:

### Ա Փ Ռ Ա Ի

Ագռաւը յայտնի է իր անդուրեկան ձայնով. նրա անախորժ կուռցը համարւում է վատ նշան. այդ պատճառով էլ առածի ձևով ասում են՝ «եթէ Աստուած ագռաւի ձայնը լսի, վարդավառին ձին կ'դնի»:

Ագռաւի մարմինը երկարուկ է, կտուցն ամուր է, կողքերից սղմած և ծաշրը կոր. թևերը գինւած են երկար փետուրներով. ոտները երկար են և ուժեղ. պուխր, թեւերը և պոչը սև են, իսկ կուրծքն ու փորը մոխրագոյն. ագռաւների մի տեսակն ամբողջապէս սև է:


Շնորհիւ մարմնի և թևերի կազմութեան, ագռաւը լաւ է թռչում. իսկ երկար և ուժեղ ոտներով նա կարողանում է երկար կանգնած մնալ ծառերի վրա և մեծ քայլերով ման գալ գետնի երեսին:

Ագռաւը շատակեր է և ուտում է ամեն ինչ. իր ուժեղ կացով նա սպանում, լափում է փոքրիկ թռչուններ, մկներ, գորտեր և այլ կենդանիներ. մտնելով բակերը, ուտում է խոհանոցներից դուրս նետած կերակուր մնացորդները. երբեմն իջնում է նոր հերկած արտերը և միջատներ ու որդեր որ-

սում. նա ուտում է նաև լէշի միս և յաճախ իջնում է լէշերի վրա:

Թէև ազոաւը երբեմն յափշտակում է հաւի ու բաղի ձագեր, աւերում է մանր թռչունների բները, փշացնում է պտուղներ ու բանջարեղէն, բայց նա համարւում է օգտակար թռչուն, որովհետև ոչնչացնում է մեծ քանակութեամբ վնասակար միջատներ, որդեր ու մկներ:

Ազոաւը շատ զգոյշ և խելացի թռչուն է. նա իր բունը շինում է բարձր ծառերի կատարներին, իջնում է անվտանգ տեղեր, իսկ բակերը մտնում է զգուշութեամբ:



Ա. գ ո աւ .


Ազոաւներն ապրում են քաղաքներին ու գիւղերին մօտիկ անտառներում, այգիներում ու պարտէզներում, իսկ ձմեռները կերակուր ձարելու համար իջնում են փողոցների ու բակերի մէջ:

Ազոաւը զարնանը 5—6 ձու է ածում և ձագեր է հանում. ձագերն սկզբում մերկ են լինում:

### Ճ Ն Ճ Ղ Ո Ի Կ

Ճնճղուկը փոքրիկ թռչուն է. նրա կտուցը կարճ է, հաստ և ամուր. թևերն ու պոչը նոյնպէս կարճ են, այդ պատճառով էլ ճնճղուկը վատ է թռչում, թռչելիս էլ շատ երկար տարածութիւն մի անգամից անցնել չի կարողանում: Ոտները, մարմնի հետ համեմատած, երկար են և ուժեղ, իսկ մասները վերջանում են կոր ճանկերով: Գետնի վրա ման գալիս նա ոչ թէ քայլում է, այլ զոյգ ոտներով ցատքում, ուստոստում է, իսկ երկար ու կոր ճանկերով ամուր բռնում է ծառերի բարակ ուստերն ու կանգնում:

Ճնճղուկը վերին աստիճանի աշխոյժ և ժիր թռչուն է. նա անվերջ շարժւում է, անվերջ ուտոստում ու թռչկոսում: Շարժողութեան չափով էլ շատակեր է. նա ձմեռ ժամանակ իջնում է բակերը, հա-



Ճնճղուկ.

ւերի հետ նրանց կերակրից ուտում, ձիու մսուրից գարին յափշտակում, խոհանոցից դուրս նետած հացի փրշրանքների վրա յարձակւում: Գարնանն իջնում է բանջարանոցները և ցանած հատիկներն ու նորածիլ կանաչն ուտում, իսկ աշնանն արտերում ու կալերում ցորենի հասկերն է կտցահարում: Բայց ճնճղուկը միևնոյն ժամամակ օգուտ էլ է տալիս. նա ոչնչացնում է բազմաթիւ վնասակար միջատներ:

Ճնճողուկը պաշտպանութիւնից զուրկ մի խեղճ թռչուն է. նրա պաշտպանութեան զէնքը նրա փետուրների գոյնն է, որով նա կարողանում է գետնի վրա և շրջապատող առարկաների մէջ աննկատելի մնալ, բայց նրա թռչնամիները, գլխաւորապէս բազէն ու կատուն, այնպիսի սուր տեսողութիւն ունին, որ նրանց աչքերից ճնճողուկի գոյնն էլ նրան չի փրկում և մեծ քանակութեամբ ճնճողուկները զոհ են գնում այդ գիշատիչներին: Չնայած այդքան զոհերին, ճնճողուկն արագ բազմանալու շնորհիւ, կարողանում է իր սերունդը պահպանել. նա տարին չորս անգամ ձագ է հանում՝ ամեն անգամ 4—6 հատ: Ձագերն սկզբում մերկ են լինում: Մի քանի շաբաթ ճնճողուկը նրանց կերակրում է մանր թրթուրներով ու որդերով:

Ձագերին ցրտից պաշտպանելու համար ճնճողուկն իր բունը շինում է քամուց պաշտպանւած տեղերում՝ կտուրների և պատերի ձեղքւածների մէջ:

Ճնճողուկը *Ատուսկեսց* թռչուն է, նա ամառ-ձմեռ լինում է մեզ մօտ և ապրում է քաղաքներում ու գիւղերում, որտեղ նա կարողանում է կերակուր գտնել:

### Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Ծիծեռնակը գեղեցիկ թռչուն է. նրա գլուխը սափակ է, կտուցը կարճ, բայց լայն բացւող. մարմինն երկարուկ է, կուրծքը լայն, ոտները կարճ, թևերը երկար ու սրածայր, պոչը նոյնպէս երկար և երկճիւղ. մէջքն ու թևերը սև են, իսկ կուրծքն ու փորն սպիտակ:

Ծիծեռնակը յայտնի է, որպէս լաւ թռչող. նրա մարմնի կազմութիւնը, կոկիկ փուռոց երկար թևերը միջոց են ապրիս նրան անագին տարածութիւններ անցնել, ժամերով օդի մէջ ճախրել և սահուն պտոյաներ գործել. նրա

թռչելուն նպաստում է մանաւանդ երկճիւղ պոչը, որը, որպէս դեկ, ուղղութիւն է ապրիս նրա պտոյաներին: Ամառ ժամանակ վաղ առաւօտներն ու երեկոները այդ սիրուն թեթևաշարժ փոքրիկ թռչունները ճախրում են օդի մէջ և զարմանալի պտոյաների հետ մի ախորժելի ճուղոցով թնդացնում օդը:

Եթէ ծիծեռնակը լաւ թռչող է, միւս կողմից, նա վատ քայլող է. նրա ոտները կարճ են, թոյլ և անյարմար քայլելու համար. բայց նա իր երկար ու բարակ ճանկերով ամուր բռնում է առաստաղից քարշ ընկած եղէգները և կախւած մնում:



Ծիծեռնակը թռչելիս ճանճ է որսում.

Ծիծեռնակը շատ թռչուն է. շող կոչւում են այն թռչունները, որոնք ձմեռները գնում են տաք երկրներ, իսկ ամառները գալիս են մեր կողմերը: Ծիծեռնակը գարնանն այնպէս շուտ և ճիշտ ժամանակին է գալիս մեզ մօտ, որ նրան տեսնելիս ասում են՝ արդէն զարուն է. և

խակապէս, ծիծեռնակը գարնան աւետաբերն է:

Ծիծեռնակները գարնանը վերադառնում են մեծ խմբերով, բայց երբեմն յայտնւում են հատ-հատ ժամանակից առաջ և ենթարկելով ցրտերին, ոչնչանում են. ահա այստեղից է կազմել այն առածը, որ ասում են՝ «մի ծիծեռնակով գարուն չի լինի»:

Ծիծեռնակը կերակրւում է միջատներով, առանձնապէս ճանձերով ու մոթեղներով և յայտնի է իր շատակերութեամբ: Հետաքրքիրն այն է, որ նա կերակրւում է թռչելու ժամանակ և ճախրելով օդի մէջ իր որսն է անում. այդ բանին նպաստում է մանաւանդ նրա սուր տեսողութիւնը:

Ծիծեռնակն իր բունը շինում է ցրտից ու քամուց պաշտպանւած տեղերում՝ առաստաղների տակ. բունը շինելում նա շատ վարպետ է. իր փոքրիկ կաուցով գետերի և առուների ափերից եռանդով կրում է կաւը և բերանի մածուցիկ թքով թացացնելով, կպցնում է բնի պատերին և ծղօտներով ամրացնում:

Բունը շինում է 8—10 օրւայ ընթացքում, օրական աշխատելով մի քանի ժամ. այդպիսով նա միջոց է տալիս, որ կպցրած ցեխը չորանայ. բունն աւարտելուց յետոյ՝ նրա մէջ հաւաքում է բմբուլ, որ ձագերի տեղը փափուկ ու տաք լինի: Գարնանը, երբ նա վերադառնում է, գտնում է իր հին բունը, նորոգում է նրան և նրա մէջ բնակելով, այնտեղ էլ ածում է ձւեր և ձագ հանում:

Ամառւան ընթացքում ծիծեռնակը երկու անգամ ձագ է հանում ամեն անգամ 4—6 հատ: Ձագերն սկզբում մերկ են լինում, բայց շուտով փետրաւորւում են ու թռչում:

Օ Չ

Օձի մարմինը երկար է, կլոր և ծածկւած է թեփոս մաշկով. մարմնի միջին մասը հաստ է, իսկ պոչի և գլխի կողմերը բարակ են:

Օձը ոտներ չունի. նա չի քայլում, այլ սողում է փորի վրա, այդ պատճառով կոչւում է սողուն: Նրա ողնաշարը շատ ճկուն է և դիւրաշարժ, իսկ մկաններն ուժեղ են. մկանների կծկելու ու բացելու և ողնաշարի ճկունութեան շնորհիւ օձը կարողանում է շարժւել և շարժւում է արագ գալարումներով և ծուռ ու մուռ գծով:

Երբ օձն ուզում է յարձակել իր թշնամու վրա, գլուխը բարձրացնում է և սպանալի դիրք ընդունում, իսկ հանգստանալու ժամանակ կծկւում է և գլուխն առնում մարմնի մէջ: Այդ նրանից է, որ օձի գլուխը շատ զգայուն է, որի պատճառով էլ, երբ ուզում են օձին հարւածել, աշխատում են հարւածը հասցնել գլխին, այն ինչ, եթէ նրա պոչը կարենք, նա չի մեռնի, այլ կտրած տեղից նորից պոչ կ'գոյանայ: Օձն ամեն տարի գարնանը շապիկ է փոխում. շա-



Օ ձ.

պիկը նախ գլխի կողմից պատուում է, ապա օձն անցնում է քարերի արանքով և մարմինը քարերին քսելով, շապիկն ամբողջապէս դուրս է գալիս:

Օձը կերարկրում է մկներով և ուրիշ մանր կենդանիներով. նրա բերանը շատ մեծ է: Վերին ծնօտի վրա կան մանր սրածայր ատամներ, բայց դրանք ծամելու համար չեն, այլ որսը բռնելու համար. նա որսը կուլ է տալիս ողջ-ողջ: Օձը կարողանում է շաբաթներով սոված մնալ:

Օձի լեզուն երկար է, բարակ և ծայրը երկձիւղ. շատերը կարծում են, թէ օձը խայթում է լեզուով, բայց այդպէս չէ. օձը խայթում է ատամներով: Խայթող ատամները երկու հատ են՝ վերին ծնօտին կպած. նրանք սուր են ու բարակ և իրենց մէջ ունին անցքեր, իսկ նրանց արմատներում գտնուում է օձի թոյնը: Օձը խայթելիս ատամների միջով թոյն է կաթեցնում վէրքի մէջ, որից մարդու արիւնը վարակում է. այդ վարակումից շատ անգամ մարդ մեռնում է:

Օձի արիւնը սառն է լինում, մինչդեռ մինչև այժմ մեր սովորած կենդանիներն ունին տաք արիւն: Արեան սառնութեան պատճառով օձը սիրում է արև տեղեր. երբ եղանակը տաք է, օձը դառնում է աշխոյժ և արագաշարժ, իսկ երբ եղանակը ցրտում է, նա թուլանում է, սառչում, իսկ ձմեռը քուն է մտնում:

Ամառուայ վերջերում կամ աշնան սկզբում օձն ածում է մի քանի ձու, որոնցից դուրս են գալիս փոքրիկ օձեր:


Օձերը լինում են տեսակ-տեսակ. նրանից մէկը լորդոն է. լորդուն թունաւոր չէ:

### Գ Ո Ր Տ

Գորտի մարմինը լայն է, տափակ և ծածկւած է լոր-

ձիւնոտ մաշկով. գլուխը մեծ է և կպած անմիջապէս իրանին. գլխի վրա կան երկու դուրս պրծած աչքեր. ոտները չորս հատ են. նա պոչ չունի:

Գորտն իր ապրուստի եղանակով նման չէ մեր սովորած կենդանիներին. մեր սովորած կենդանիներն ապրում են միմիայն ցամաքի վրա, իսկ գորտն ապրում է թէ ցամաքի վրա և թէ ջրի մէջ, այդ պատճառով էլ կոչւում է երկկենցաղ կենդանի: Ցամաքի վրա նա ցատքում է գլխաւորապէս յետին ոտների շնորհիւ, որոնք երկար են, ուժեղ, ճկուն ու ծալող, իսկ ջրի մէջ լողում է դարձեալ նոյն յետին ոտների օգնութեամբ, որոնց երկար մատները միացած են յոդաթաղանթով: Գորտն ապրելու համար ընտրում է խոնաւ և ճահճային տեղեր. այդ նրանից է, որ չոր տեղում նրա լորձիւնոտ մաշկը չորանում է և ճաքճքում:



Գ ո Ր Ս.


Գորտը կերակրւում է ճիճուներով, միջատներով և փոքրիկ ձկներով. միջատներ որսալու մէջ շատ ճարպիկ է. մեծերին բռնում է բերանով, իսկ փոքրերին, մանաւանդ ճանձերին, որսում է իր կաշուն լորձիւնոտ լեզուով և այդ բոլորին կուլ է տալիս առանց ծամելու:

Գարնանը գիշեր ժամանակ ճահիճների և լճակների մէջ գորտերը ձայն ձայնի տալով, շրջակաները երբեմն լցնում են անախորժ կրկոցով. դա նրանց երգն է:

Գորտի արիւնը, ինչպէս և օձինը, սառն է. այդ պատճառով նա կարիք ունի արևի տաքութեան, իսկ երբ ձմեռը գալիս է, նրա մարմինն աւելի է սառչում և միւս կողմից կերակուր չ'գտնելով, թաղում է ճահիճների և տղմի մէջ ու քնած մնում մինչև գարուն:

Պաշտպանութեան գէնքից գուրկ է գորտը. նա իր թշնամիներից ազատում է կամ ջրի ու տղմի մէջ ընկղմւելով, կամ իր գոյնով. նրանք ունենում են իրենց ապրած տեղերին համապատասխան գոյն:

Գորտերը բազմանում են ձւերի միջոցով. մի գորտը մի անգամից ջրի մէջ ածում է անագին քանակութեամբ ձւեր, որոնցից գուրս են գալիս փոքրիկ ձկնանման կենդանիներ: Մի քանի օրից յետոյ գուրս են գալիս նրանց յետևի և ապա առջևի ոտները, որից յետոյ ոչնչանում է պոչը և ձկնանման փոքրիկ գորտը բոլորովին կերպարանափոխւելով, դառնում է կատարեալ գորտ:



Ձւից ելած գորտի կերպարանափոխութիւնները.


Մինչև այժմ մեր սովորած կենդանիներն ապրում էին օդի մէջ և շնչում էին թոքերով, մինչդեռ ձւերից նոր գուրս եկած գորտերն սկզբում ապրում են ջրի մէջ և շնչում են խոփաներով, բայց երբ նրանք մի փոքր մե-

ծանում են, նրանց խոփները ոչնչանում են և խոփկների փոխարէն գուրս են գալիս թոքեր, որից յետոյ միայն գորտերը թողնում են ջուրը և ցամաքային կեանք են վարում:

## Չ Ո Ւ Կ

Ձկան մարմինը երկարուկ է և կողքերից սղմած. մարմնի միջին մասը հաստ է, իսկ պոչն ու գլուխը սուր. մարմինը ծածկւած է թեփուկներով, բայց կան ձկներ, որոնք թեփուկներ չունին:

Ձուկն ապրում է ջրի մէջ, այդ պատճառով նախ նրա մարմինը փոքրիկ նաւակի ձև ունի՝ ջուրը հեշտութեամբ պատռելու և առաջ գնալու համար, երկրորդ՝ ոտների փոխարէն ունի յոդաթեւեր, որոնցով նա ազատ կերպով լողում է ջրի մէջ: Մի երկճիւղ լողաթև էլ գարնւում է պոչի ծայրին, որի աջ ու ձախ շարժելուց, ձկան մարմինը թափ է ստանում և ուժով առաջ լողում:



Չ ո Ւ Կ.

Բացի լողաթևերից ձուկն իր կրծքի խոռոչում ունի օդով լցւած մի յոդափամփուշտ, որը հեշտացնում է ձկան ջրի տակ ընկղմւելն ու ջրի երես բարձրանալը. երբ ձուկն ուզում է ընկղմւել ջրի խորքը, լողափամփուշտը սղմում

է, դրա հետ նրա մարմինը փոքրանում է և հեշտութեամբ ջրի խորքն է իջնում, իսկ երբ ձուկն ուզում է ջրի երեսը բարձրանալ, լողափամփուշարը ընդարձակուում է, դրա հետ նրա մարմինը լայնանում և հեշտութեամբ բարձրանում է ջրի երեսը:

Ձկան բերանը շատ մեծ է. ծնօտների և քիմքի վրա կան բազմաթիւ մանր ստամուկներ, որոնք ծառայում են միայն որսը բռնելու համար: Նա կերակրւում է ջրային որդերով և մանր ձկներով, որոնց կուլ է ապլիս առանց ծամելու:

Նա թռքեր չունի, այլ շնչում է խոփկներով, որոնք գտնւում են գլխի յետեի մասում. խոփկները նման են իրար վրա դարսած մսային սանրիկների, որոնք կպած են կռճիկների վրա. դրսի կողմից ծածկւած են բացւող ու խփւող փականներով: Ձուկը շարունակ ջուրը քաշում է բերանը և խոփկների միջով փականների տակից դուրս տալիս, որի ժամանակ խոփկները ծծում են ջրի մէջ եղած օդը: Եթէ ձկանը ջրից հանենք, նրա խոփկները կ'չորանան և չեն կարող օդ ծծել. այդ է պատճառը, որ ձկները ջրից դուրս չեն կարողանում ապրել:

Եթէ ձուկը վերցնենք ձեռներիս մէջ, սառնութիւն կ'զգանք. այդ նրանից է, որ ձկան արիւնը օժի և դորսի արեան պէս սառն է:

Ձուկը բազմանում է ձւերի միջոցով. նա իր ձւերն անում է ծանծաղուտ տեղերում. դրանցից դուրս են գալիս փոքրիկ ձկներ. ձկան ձւերը վիսում են անթիւ:

Ձկները լինում են տեսակ-տեսակ. մեզանում յայտնի են՝ իշխանը, կարմրախայտը, տառետը, լօքօն:

Ձկան միտը շատ համեղ է և մարդու լաւ կերակրենքից մէկն է:

### Մ Ե Ղ Ո Ւ

Մեղուն թէև խայթող, բայց օգտակար կենդանի է. նա մեզ մեզը է տալիս:

Նա զանազանւում է մինչև այժմ մեր սովորած կենդանիներից նրանով, որ ոսկրներ չունի. ոսկրների փոխարէն նրա մարմինը դրսից պատած է ամուր մաշկով. նրա արիւնն սպիտակ է, այն ինչ, մեր սովորած կենդանիների արիւնը կարմիր է: Բացի այդ, մեղուի թէ մարմինը և թէ ոտները բազկացած են մի քանի մասերից, որոնք միացած են իրար հետ յօղևլով, որի պատճառով էլ մեղուն և մեղուի նման կենդանիները կոչւում են միջատներ:



Քաղուհի



Արու




Աշխատուոր

Մեղուի մարմինը ծածկւած է շէկաւուն մազիկներով և կազմւած է գլխից, կրծքից և փորից. գլխի երկու կողմերում գտնւում են մի-մի մեծ աչք, իսկ ճակատի վրա՝ երեք փոքրիկ աչքեր. չնայած դրան, նրա տեսողութիւնը թոյլ է. բայց դրա փոխարէն զարգացած է նրա հոտառութիւնը, որի շնորհիւ նա հեռուից զգում է ծաղիկների հոտը և գիմում դէպի այն կողմը. հոտառութեան դործարանը մի գոյգ յոպիկակներն են, որոնք գտնւում են գլխի վրա. մեղուի բերանը յարմարեցրած է թէ կրծելու և թէ ծծելու համար. ծծելու համար բերանի ցածի մասում ունի կլանիթ, որը մտցնում է ծաղիկների մէջ և նրանց հիւթը ծծում:

Նա ունի մէջքի վրա երկու զոյգ թափանցիկ թևեր, իսկ կրծքի տակ՝ երեք զոյգ սաներ. յետևի զոյգ սաների վրա կան փոսիկներ, որոնք կոչուում են կորոպիկներ:

Մեղուները լինում են վայրենի և ընտանի. ընտանի մեղուներն ապրում են մարդկանց ձեռքով շինած կթոցների և արկղների մէջ. դրանց ասում են փեթակներ: Մեղուներն ապրում են մեծ բազմութեամբ. մի փեթակի մէջ շատ անգամ լինում են մինչև 20,000 մեղու, որոնցից մէկը լինում է թագաւորի, մի քանի հարիւրը՝ արտուներ, իսկ մնացածները՝ աշխատատարներ: Աշխատատարները էգեր են. թագուհին տարբերում է միւս էգերից իր մարմնի երկարութեամբ:



Խ ո ռ Է Խ

Մեղուները յայտնի են իրենց աշխատասիրութեամբ. նրանց աշխատասիրութիւնը առած է դարձել մարդկանց մէջ. նրանցում բոլոր աշխատանքները բաժանւած են. այսպէս՝ թագուհին միայն ձու է ածում. արուները գործ չեն կատարում, այլ միայն ման են գալիս թագուհու յետևից. այդ պատճառով աշխատատարներն աշնանը նրանց կոտորում են, որ ձըմ-

րան պաշարը գուր տեղ չ'սպառեն: Աշխատատարների մի մասը ձագերին է խնամում ու կերակրում, միւս մասը մեղր է պատրաստում, երրորդ

մասը փեթակն է մաքրում ու պաշտպանում թշնամիներից, չորրորդ մասը խորխոր է պատրաստում:

Խորխորը մոմից շինւած հաց է, որի երկու երեսների վրա մի օրինակելի կարգով դասաւորւած են վեցանկիւնանի ծակոտիներ, որոնց ասում են բջիջներ. բջիջները շինում են աշխատատարները մոմից, որը, ինչպէս քրտինք, արտադրւում է նրանց փորի օղակներից: Բջիջների մի մասի մէջ աշխատատարները հաւաքում են մեղր. դա նրանց ձմրան պաշարն է, որից և օգտւում են մարդիկ. իսկ բջիջների միւս մասի մէջ թագուհին ածում է մի-մի ձու, որոնցից մի քանի օր անց դուրս են գալիս փոքրիկ որդեր կամ թրթուրներ. թրթուրներին կերակրում են աշխատատարները ծաղիկների փոշիով. մի քանի օր անց թրթուրները կծկւում, դառնում են կծկւած և քուն են մտնում, որից մի քանի օր անց նորից կերպարանափոխւում են և դառնում փոքրիկ մեղուներ:

Ձագերին կերակրելու և մեղր պատրաստելու համար մեղուները հիւթ են հաւաքում ծաղիկներից. այդ պատճառով մեղուանոցները շինում են՝ բոյսերով ու ծաղիկներով հարուստ տեղերում: Ծաղիկների պսակի մէջ կայ փոշի և քաղցր հիւթ. մեղուն իջնելով ծաղկի վրա, գլուխը մտցնում է պսակի մէջ, կնձիթով ծծում է քաղցր հիւթը և կուլ է տալիս. իսկ փոշին հաւաքում է սաների կողովիկների մէջ: Քաղցր հիւթը գնում է մեղուի կերակրափողի մի լայնացած մասի մէջ, որը կոչւում է քուշ. մեղուի քուշը համապատասխանում է հաւի թիթուձին. քուշի մէջ քաղցր հիւթը դառնում է մեղր: Այդպէս, բազմաթիւ ծաղիկների հիւթն ու փոշին հաւաքելով, մեղուն վերադառնում է փեթակ, ուր դատարկում է բջիջների մէջ թէ քուշի մէջ պատրաստւած մեղրը և թէ կողովիկների փոշին:

Մեղուները մի ընտանիքից մի նոր ընտանիք կազ-

մուսմ է այս կերպ. ինչպէս տեսանք, մի փեթակում լինում է մի թագուհի. բայց յունիս ամսին առաջ է գալիս մի այլ թագուհի. աշխատաւորները ուշիուշով հետեւում են, որպէսզի հին ու նոր թագուհին իրար չ'հանգիպեն, ապա թէ ոչ, նրանց մէջ կոխ առաջ կ'գայ: Միւս կողմից նոր սերունդի առաջ գալու շնորհիւ փեթակի մէջ արդէն նեղածք է լինում, որի պատճառով և փեթակում անհանգստութիւն է տիրում: Այդ ժամանակ հին թագուհին փեթակից թողնում հեռանում է. նրա յետեից գնում են նրա կողմնակիցները. մեղանոցի տէրը դրանց առնում է մի նոր փեթակի մէջ:

Մեղունների թշնամիներն են մի քանի թռչուններ. դրանցից նա պաշտպանւում է իր թունաւոր խայթոցով, որ գտնւում է մարմնի յետեի մասում. խայթոցը թշնամու մարմնի մէջ խրելով մեղուն իրենից թոյն է արձակում. փոքրիկ միջատները այս թոյնից մեռնում են: Նոյն խայթոցով մեղուն խայթում է նաև մարդկանց, երբ նրանք դիպչում են նրան, բայց խայթոցը չի կարողանում դուրս քաշել, այլ թողնելով թշնամու մարմնի մէջ, փախչում է և մի փոքր անց՝ մեռնում:

## Մ Ա Յ Ի Ս Ե Ա Ն Բ Չ Է Չ

Բզէզը միջատ է. նա յայտնի է իր բզգարով, որ առաջ է գալիս նրա թևերի շարժումից. այստեղից էլ նա ստացել է բզէզ անունը: Բզէզներին մենք պատահում ենք պարտիզում. նրանք շատ տեսակներ ունին. նրանցից մէկը կոչւում է մայիսեան ղզեզ կամ ծիրանհատուկ:

Մայիսեան բզէզի մարմինը պատած է սև ամուր կեղևով, որը ծառայում է նրան որպէս պաշտպանութեան զէնք. նրա մարմինը, մեղրի մարմնի պէս, բաղկացած է

գլխից, կրծքից և փորից. գլուխն ամուր է, ունի նաև ամուր ծնօտներ, որոնցով նա փորում է գետինը և կրծում է նոյն իսկ կոշտ բոյսեր: Գլխի վրա կան երկու շոշափուկներ, որոնցով կերակուր է փնտռում: Նա ունի երկու զոյգ թևեր. դրանցից մի զոյգը սև ու ամուր է և կոչւում է արտաքին թևեր. երկրորդ զոյգը թափանցիկ ու բարակ է և կոչւում է ներքին թևեր. ներքին թևերը ծալած են լինում արտաքին թևերի տակ. նրանք բացւում են այն ժամանակ, երբ բզէզն ուզում է թռչել և յետ է տանում արտաքին թևերը:

Մայիսեան բզէզի ոտները բաղկացած են մազիկներով պատած մի քանի յօդաւոր մասերից. ոտների ծայրերը զինւած են փոքրիկ սուր ճանկերով, որոնցով նա փորում է հողը, ամուր բռնում է աւարկաներից և մազլցում է ծառերի վրա:



Մայիսեան բզէզ կամ ծիրանհատուկ

Բզէզները կերակրւում են բոյսերով և բոյսերի արմատներով. նրանք միևնոյն ժամանակ շատակեր են, այդ պատճառով մեծ վնասներ են հասցնում բուսականութեանը:


Գարնանը փափուկ հողը քանդելով, բզէզը նրա մէջ ածում է ձևեր. մի երկու շաբաթից յետոյ այդ ձևերից դուրս են գալիս սպիտակ թրթուրներ. թրթուրները հողի տակ ապրում են երեք տարի. ձմեռները ցրտից պաշտպանելու համար նրանք աւելի ևս խորն են գնում: Հողի տակ կերակրւում են բոյսերի արմատներով, կրծելու և հողը քանդելու համար նրանք ունին ամուր ծնօտներ: Թրթուրները երեք տարի հողի տակ մնալով, մեծանում, կերպարանափոխւում են և բզէզ դառնալով, հողը ծակում

են ու դուրս գալիս: Այդպիսով նրանց կեանքի մեծ մասն անց է կենում հողի տակ:

### Ճ Ա Ն Ճ

Ճանճը յայտնի է իր աներեսութեամբ և կեղտոտութեամբ. չկայ մի կերակուր, մի իր, որի վրա նա չնստի և չապականի:

Նրա մարմինը բաղկացած է գլխից, կրծքից և փորից. գլխի վրա կան երկու մեծ աչքեր. բերանը վերջանում է խողովակաձև մի փոքրիկ կնճիթով, որով նա ուտում է կերակուրը: Կրծքի տակ կան երեք գոյգ ոտներ, իսկ մէջքի վրա նստած են մի գոյգ թափանցիկ թևեր. թևերի տակ գտնուում են փոքրիկ դեղնագոյն տերևիկներ, որոնք թռչելու ժամանակ շարժելով բզրոց են հանում: Ծնորհիւ թափանցիկ թևերի և մեծ աչքերի, ճանճը լաւ թռչող և աշխոյժ միջատ է:




Ճանճ և ճանճի թրթուրները

Ճանճն ուտում է ամեն բան, բայց շրիկ բան, որովհետև նա ոչ թէ ուտում է, այլ կնճիթով ծծում է: Ծիշտ է, ճանճն ուտում է և կոշտ բաներ, ինչպէս է շաքարը, բայց նա նախ իր կնճիթից շաքարի վրա թուք է կաթեցնում և ապա հալեցնելով ծծում է: Նա շատակեր է ու աներես.

մտնում է խոհանոցը, գոմը, սենեակը, նստում է հացի, կերակրի վրա, ընկնում է թէյի և կաթի մէջ, ապականում է պատերը, առաստաղները, ապակիներն ու հայելիները. բացի այդ, նստելով մարդկանց ձեռների և դէմքի վրա,

նրանց հանգիստ չի տալիս ոչ արթուն և ոչ քնած ժամանակ: Ճանճերն աճում են շատ մեծ չափով. նրանք ձուն ածում են ամեն տեղ՝ աղբի վրա, կերակրի երեսին, մսի վրա. մէկ կամ երկու օրից յետոյ ձևերից դուրս են գալիս մանր թրթուրներ, որոնք մի երկու շաբաթից յետոյ դառնում են ճանճեր: Չլինէր ճանճի արագ աճումը, նրա սերունդը կ'վերջանար, որովհետև նրա թշնամին ոչ միայն մարդն է, որ նրանց կոտորում է թունաւոր թղթերով և այլ միջոցներով, այլ նաև սարդը, գորտը, հաւը և միջատակեր թռչունները, որոնք ոչնչացնում են անագին քանակութեամբ ճանճեր:



Ճանճի գլուխը և կնճիթը մեծացրած.


Ճանճերը ձմեռները քաշուում են առաստաղների և պատերի ձեղքերի մէջ ու քնում, իսկ գարնանը նորից զարթնում են:

### Ս Ա Ր Դ

Սարդն այն կենդանին է, որ պատերի անկիւններում ոստայն է գործում. ոստայն գործելու պատճառով մի քանի տեղերում նրան ասում են գործարար:

Սարդի մարմինը բաղկացած է երկու ուռուցիկ մասերից. փոքրիկ ուռուցիկը կազմում են գլուխն ու կուրծքը միասին, իսկ մեծ ուռուցիկը փորն է: Նա գլխի վրա ունի 8 փոքրիկ աչքեր. բերանը բաղկացած է երկու գոյգ ծնօտներից, որոնք նրան ծառայում են որպէս շօշափուկներ. բերանում ունի թոյն, որով թունաւորում, ապանում է իր որսին. կրծքի տակ շարւած են չորս գոյգ երկար ոտներ,

որոնք ունին սանրի նման ճանկեր, բացի այդ, նա ունի իր փորի յետևի մասում 4—6 փոքրիկ ուռուցիկներ, որոնք դուրս են թողնում մի աեսակ հիւթ. այդ հիւթը ուռուցիկներից դուրս գալով, սկսում է թանձրանալ. ահա այդ հիւթից սարդն իր սանրանման ճանկերով ոլորում է շատ բարակ թելեր և այդ թելերից գործում է իր ցանցածև ոստայնը:



Սարդ և իր ոստայնը

Սարդը կերակրւում է փոքրիկ միջատներով. նա սիրում է մանաւանդ ճանճ որսալ: Որսի ժամանակ նա թաղնւում է մի անկիւնում և հէնց որ ճանճը գալիս ոտները խճճում է ոստայնի թելերի մէջ, թազնւած տեղից յարձակւում է ճանճի վրա, խայթում,

սպանում է նրան և անուշ անում:

Ոստայն գործելում սարդը շատ վարպետ է. նա թելերը ձգում է շատ կանոնաւոր շարքերով. ապա նրանց կապկպում է իրար, և իր ոստայնին տալիս է ցանցի ձև: Երբեմն մի բարակ թելից կախւած՝ առաստաղից իջնում է ցած, մէկ էլ, արագ ժողովելով թելը, վեր է բարձրանում:

Միև միջատների պէս սարդերը բազմանում են ձւիկներով:

## Բ Ո Յ Ս Ե Ր

Մարդու սիրած տեղերից մէկն է պարտէզը. այդ նրանից է, որ պարտէզը զարդարւած է ծառերով, ծաղիկներով և խոտերով: Մարդուն սիրելի դաշտերը, լեռներն ու ձորերը նոյնպէս զարդարւած են ծառերով, ծաղիկներով և խոտերով, որոնց ընդհանուր բառով ասում ենք թոյս: Բոյս ասում ենք նրա համար, որ նրանք բուսնում, աճում են, այսինքն ծնւում, մեծանում են: Եւ իսկապէս, բոյսերն, ինչպէս և կենդանիները, կեանք ունին, ապրում են, անունդ են ստանում, ապա ծերանում ու մեռնում են. նրանք կենդանիներից զանազանւում են նրանով, որ ինքնակամ մէկ տեղից միւսը գնալ չեն կարող, այլ շարունակ կպած են լինում միևնոյն տեղից:

Բոյսերի հետ մօտիկից ծանօթանալու համար, վերցնենք մեր պարտիզի տանձենին:

## ՏԱՆՁԵՆՈՒ ՄԱՍԵՐԸ

ԱՐՄԱՏ.— Ծանձենու հողի տակ գանուղ մասը կոչւում է *արմատ*, որը բազմաթիւ ճիւղերով տարածւած է հողի մէջ. ճիւղերը որքան հեռանում են բուն արմատից, այնքան բարակում են: Արմատի շնորհիւ տանձենին ամուր կանգնած է հողի մէջ և վայր չի ընկնում. նոյն արմատի վրայի թելիկներով տանձենին հողից ու ջրից ստանում է իր անունդը:

Տարբեր բոյսերի արմատները տարբեր ձևի են լինում:

**ՏԵՐԵԻ:**—Տանձենու ճիւղերի վրա շարւած են նրա բազմաթիւ տերեւները: Տերեւները կպած են ճիւղերին փոքրիկ կոթերով, որոնք անցնելով տերեւի մէջտեղով, մինչև ծայրը, երկու կողմից արձակում են բարակ թելիկներ. դրանք տերեւների սննդառութեան ճանապարհներն են: Ինչպէս արմատն իր թելիկներով հողից ու ջրից ստանում է տանձենու համար սնունդ, այնպէս էլ տերեւները օդից և արեգակից ստանում են տանձենու համար սնունդ:

Տարբեր բոյսերի տերեւները տարբեր ձևի են լինում, իսկ խոտաբոյսերի տերեւները մեծ մասամբ լինում են նեղ և երկար:

**ԲՈՒՆ:**—Տանձենու գետնից դուրս մնացած մասը՝ գետնից միջև ճիւղերը՝ կոչւում է *բուն*: Բունը հաստ է, ամուր և ուղղւած է դէպի վեր. բնի վրա գտնւում են ճիւղերը, որոնք քանի բնից հեռանում են, այնքան ճիւղաւորւում են ու բարակում: Բունը տանձենու կարևոր մասերից մէկն է. նախ նրա վրա հաստատւած է տանձենու ամբողջ վերևի մասը. երկրորդ՝ նրա միջով բարձրանում է դէպի ճիւղերն ու տերեւները արմատի՝ հողից ու ջրից ստացած սնունդը և իջնում է դէպի արմատը տերեւների՝ օդից և արևից ստացած սնունդը:

Տարբեր բոյսերի բները տարբեր են լինում:

Այն բոյսերը, որոնք տանձենու պէս ունին ամուր փայտանման բուն, կոչւում են *ծառեր*:

Այն բոյսերը, որոնց բունը բաղկացած է մի քանի



Տանձենին իր արմատով:

միատեսակ ճիւղերից, որոնք արմատից բարձրանում են խմբով, ինչպէս վարդը, կոչւում են *թփեր*:


Այն բոյսերը, որոնց բունը բարակ է, կանաչ ու փափուկ, ինչպէս ցորենը, լոբին, կոչւում են *խոտաբոյսեր*: Խոտերի բունը կոչւում է *ցողուն*:

**ԿԵՂԵԻ:**—Տանձենու բունն ու ճիւղերը պատած են *կեղեւով*. Բնի վրայի կեղևը հաստ է ու կոպիտ, իսկ ճիւղերի վրայինը՝ բարակ ու կոկ: Կեղևը բոյսերին պաշտպանում է ցրտից ու հարւածներից:

**ԲՆԱՓՈՅՑ:**—Տանձենու բնի կեղևի տակ գտնուող ամուր փայտանման մասը կոչւում է *բնափայտ*: Եթէ տանձենու բունը սղոցով կարենք, նրա կտրւածքի վրա կ'նկատենք շրջանաձև շերտեր, որոնք հետզհետէ նեղանալով, վերջանում են միջուկով: Իւրաքանչիւր տարի բնափայտի շերտերի վրա աւելանում է մի նոր շերտ. այդպիսով, եթէ մեր տանձենու բնի շերտերը 18 հատ են, կ'նշանակի մեր տանձենին 18 տարեկան է: Բնափայտի շերտերը աւելի լաւ նկատելի են կաղնու կամ թթենու կտրւածքի վրա:

Տարիքի նկատմամբ բոյսերը լինում են *բազմամեայ* և *միամեայ*:


Այն բոյսերը, որոնք ապրում են շատ տարիներ և տալիս են պտուղ շատ անգամ, ինչպէս մեր տանձենին, կոչւում են *բազմամեայ* բոյսեր:



Բնի կտրւածքը—կեղև. բնափայտն իր շերտերով և միջուկը:

Այն բոյսերը, որոնք ունին մի տարւայ կեանք և տալիս են պտուղ միայն մի անգամ, ինչպէս ցորենը, կոշ-  
ւում են միամեայ բոյսեր:

**ԾԱՂԻԿ.**— Գարնանը տանձենու վրա դուրս են գալիս բազմաթիւ սիրուն ծաղիկներ: Ծաղիկը կպած է լինում ճիւղին փոքրիկ կոթով. ծաղկի արտաքին մասը կոչւում է բաժակ. բաժակը բաղկացած է հինգ փոքրիկ տերևիկներից. դրանք կոչւում են բաժակաթերթեր: Բաժակի մէջ շրջանաձև նստած են հինգ սպիտակ թերթիկներ. այդ թերթիկները միասին կոչւում են պսակ, իսկ առանձին-  
առանձին՝ պսակաթերթեր: Պսակի մէջտեղում գտնուում



Ծ ա ղ ի կ ն ե ր

են փոքրիկ թելիկներ, որոնց ծայրերը գնդաձև են. այդ թելիկները կոչւում են՝ ստեղներ: Առէչների մէջտեղում կան՝ նրանցից աւելի բարձր՝ ուրիշ թելիկներ, դրանք կոչւում են վարսակ: Առէչներն ու վարսանդը բոյսի կա-  
րևոր մասերն են. նրանցով է գոյանում սերմը:

Տարբեր բոյսերի ծաղիկները տարբեր են լինում իրենց գոյնով, ձևով և բաժակաթերթերի, պսակաթերթերի, առէչների և վարսանդի քանակութեամբ: Կան բոյսեր, որոնց ծաղիկները բաժակաթերթեր և պսակաթերթեր չունին. այդպէս է ցորենի ծաղիկը:

**ՊՏՈՒՂ.**— Ծաղիկը բացւելուց մի քանի օր յետոց

բաժակաթերթերն ու պսակաթերթերը թափւում են. թափ-  
ւում են նոյնպէս առէչներն ու վարսանդի վերևի մասը, իսկ վարսանդի տակի մասը, որը ուռուցիկ է, հետզհետէ մեծանալով, դառնում է համեղ տանձ. դա մեր տանձե-  
նու պտուղն է:

Շատ բոյսերի պտուղը լինում է անհամ և ուտելու համար անպէտք:

**ՍԵՐՄ:**— Եթէ տանձը կտրենք, նրա մէջ կ'տեսնենք սև փոքրիկ կորիզներ. դրանք տանձի սերմերն են: Եթէ ուզում ենք նոր տանձենի բուսցնել, այդ սերմերից պի-  
տի գցենք հողի մէջ: Մեր տանձենին առաջ է եկել այդ փոքրիկ սերմերից. այդպիսով սերմը բոյսի ամենապէտ-  
քական մասն է: Ինչպէս որ թռչունները բազմանում են ձւերի միջոցով, այնպէս էլ բոյսերը բազմանում են սեր-  
մերի միջոցով:

Տարբեր բոյսերի սերմերը լինում են տարբեր ձևի և մեծութեան:

### ՏԱՆՁԵՆՈՒ ՄՆԵՂԱՌՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՃՈՒՄԸ

Տանձենին, ինչպէս տեսանք, առաջ է եկել մի փոք-  
րիկ կորիզից. այդ կորիզն աճել, մեծացել է և դարձել մեծ ծառ, որը իւրաքանչիւր տարի արձակում է նորա-  
նոր ճիւղեր, տալիս է մեծ քանակութեամբ տերևներ ու պտուղներ. ահա այդ բոլորի նիւթը մեր տանձենին ստա-  
նում է հողից, ջրից, օդից և արեգակից:

**ՀՈՂ:**— Տանձենուն սնունդ տւողն արմատն է. ար-  
մատն իր հազարաւոր թելիկներով հողից ծծում է նրա հիւթը և ուղարկում է բոլոր ճիւղերին: Եթէ տանձենու

արմատը հողի տակից հանենք, տանձենին կ'չորանայ: Այնպէս էլ բոլոր բոյսերը, եթէ նրանց արմատահան անենք և հողից զրկենք, կ'չորանան:

**ՁՈՒՐ:**—Մենք տանձենին շուտ շուտ ջրում ենք: Չուրը համեւելով տանձենու արմատներին, ծծւում է նրանց մէջ. բացի այդ, Չուրը փափկացնում է արմատներին շրջապատող հողը, որից յետոյ նրանք հեշտութեամբ կարողանում են թաց հողի հիւթը ծծել, որով սնունդ են ստանում թէ արմատները և թէ ճիւղերն իրենց տերևներով: Եթէ մենք տանձենին չ'ջրենք, նա շուտով կ'չորանայ:

Շատ բոյսեր աճում են միայն անձրևի ջրով, այդպէս են լեռնային և անտառային բոյսերը:

**ՕՐ:**—Տանձենին սնունդ է ստանում նաև օդից. օդը նրա համար նոյքան անհրաժեշտ է, որքան մարդու և կեդանիների համար: Տանձենու տերևները կլանում են օդից մի կարևոր նիւթ, որը տերևի մէջ միանում է արմատից եկած նիւթերի հետ. այդ միացումից պատրաստում է տանձենու սնունդը:

Տանձենուն, ինչպէս և բոլոր բոյսերին, անհրաժեշտ է նաև *ուարտթիւն* և *ոյս*, իսկ տաքութիւնը և լոյսը բխում են արեգակից:

**ՏԱՔՈՒԹԻՒՆ:**—Աշնանը տանձենու տերևները ցրտից թափւում են. նա այլ ևս չի սննդւում, չի աճում, այլ քուն է մտնում, իսկ գարնանը նորից զարթնում է և կանաչում: Այդպէս են ծառերի մեծ մասը. նրանք աշնանը տերևաթափ են լինում, մերկանում են, իսկ գարնանը, երբ եղանակը տաքանում է, նորից ծաղկում են և աճում. հետեւապէս բոյսերի աճման համար անհրաժեշտ է նաև տաքութիւն:

**ԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒ:**—Մեր տանձենու տերևներն անթիւ են, բարակ ու լայն. նրանք շարած են այնպէս կանոնաւոր, որ մէկը միւսին չի ծածկում: Տերևների այդպիսի դասաւորութիւնը նրա համար է, որ ծառը նրանց միջոցով շատ լոյս ստանայ և շատ արև տեսնի: Եթէ մենք որ և է բոյս զրկենք լոյսից ու արևից և նրան դնենք մի բոլորովին մութ տեղ, այդ բոյսը շուտով կ'չորանայ: Արևի և լոյսի շնորհիւ է, որ տանձենու տերևները կանաչ գոյն են ստանում և իրենց մէջ նրա համար սնունդ պատրաստում:

### ԲՈՅՍԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Բոյսերը մարդուն անչափ օգուտներ են տալիս. մարդու կերակրների մեծ մասն ստացւում է բոյսերից. մեր ամեն օրւայ կերած հացն ստացւում է հացաբոյսերից. շաքարը պատրաստւում է բազուկից և շաքարեղէգնից. սուրճը և թէյը ստացւում են ծառերից: Գինին և օղին պատրաստում են խաղողից. մեր գործածած բոլոր մրգերը բոյսերի պտուղներ են. շատ տեսակ իւղեր, որոնք պէտք են գալիս կերակրների և ներկերի համար, ստացւում են բոյսերի հատիկների և ծառերի կեղևից: Բժշկական դեղերը զլիւաւորապէս խոտեր են. հագուստեղէնի մեծ մասը պատրաստւում է բամբակից, որը նոյնպէս բոյս է: Բացի այդ ծառերի բներից կտրած գերաններից և տախտակներից շինում են տներ, կահ-կարասիներ, կամուրջներ, մեքենաներ. ծառերից ստացած փայտով տաքացնում են բնակարանները. վերջապէս բոյսերով կերակրւում են կենդանիներից շատերը:


Այս է պատճառը, որ մարդիկ այնքան խնամք են տանում բոյսերի վրա, հոգս են տանում, որ պարտէզները, այգիներն ու անտառները չ'ոչնչանան:

Անտառները մի նշանակութիւն էլ ունին. այդ այն է, որ նրանք իրենց մէջ պահում են խոնաւութիւն, որից մեղմանում է շրջակայքի ամառային շոգն ու սոթը և ձմեռայ խստութիւնը:

Եթէ բոյսերն այսքան անհրաժեշտ են մեզ համար, ուրեմն ծանօթանանք նրանցից մի քանիսի հետ աւելի մօտիկից:


### Խ Ն Ձ Ո Ր Ե Ն Ի

Խնձորենին պտղատու ծառ է. նա սենի համեղ ու գեղեցիկ պտուղ, որին ասում ենք խնձոր:



Խ Ն Ձ Ո Ր Ե Ն Ի.

Խնձորենու արմատը բազմաճիւղ է. նա փուած է շորս կողմը մեծ տարածութեան վրա. ճիւղերը նոյնպէս փուած են. որպէս զի խնձորենիները իրար վրա շաք չ'գցեն, նրանց տնկում են իրարից հեռու-հեռու: Խնձորենու բունը հաստ է, տերկները երկարուկ են և եզրները առամնաւոր. ծաղիկները բաց-վարդագոյն են, բաժակաթերթերը և պսակաթերթերը հինգ-հինգ հատ. առէջները շատ են, իսկ վարսանդը հինգ թելանի:



1) Խնձորենու ճիւղն իր տերկներով և ծաղիկներով. 2) ծաղիկի կտրուածքը. 3) խնձորը վերեից ներքի կտրուած. 4) խնձորը լայնքին կտրուած:

Խնձորենին սիրում է բարեխառն օդ. ցուրտ անդերում նա լաւ չի աճում, պտուղն էլ թթու է լինում, իսկ շատ շոգ անդերում պտուղը շուտ հասնելուց համ չի ունենում:

Խնձորենիները յայտնի են իրենց երկար կեանքով. նրանց մի քանի տեսակներն ապրում են 100 տարուց աւելի:

Պտուղները հասնում են զանազան ժամանակներում. կան խնձորներ, որ հասնում են ամբարն ամիսներին, կան խնձորներ էլ, որ հասնում են աշնանը. աշնանը հասնող խնձորների մի քանի տեսակները լինում են շատ դիմացկուն և պահւում են ամիսներով. սրանք կոչւում են պսևոռնի խնձոր:

Խնձորները լինում են զանազան մեծութեան, գոյնի և համի. միջուկն սպիտակ է, համը քաղցր, թթւաշ և թթու. նրանցից պատրաստում են կերակրներ, մուրաբաներ և կօստերվաներ:

Խնձորենու մի քանի տեսակները բուսնում են անտառներում վայրենի դրութեամբ. նրանք զանազանւում են պարտէզներում աճող ընտանի խնձորենուց նրանով, որ լինում են կարճահասակ ու կոպիտ, ունենում են փոքրիկ ու թթու պտուղներ, և փշեր, որոնք պաշտպանում են ճիւղերն ու տերևները խոտակեր կենդանիներից: Ընտանի խնձորենիները, որոնց վրա հոգս են տանում մարդիկ, կորցրել են իրենց փշերը:

Իրենց ծաղիկներով, պտուղներով և սերմերով խնձորենուն նման են տանձենին և սերկևիլի ծառը:

### Ս Ա Լ Ո Ր Ե Ն Ի

Սալորենին պտղատու ծառ է, նրա պտուղը կոչւում է սալոր (շոր):

Սալորենու արմատը շատ փուլած չէ. բունը կարճ է և բարակ. ճիւղերը խմբւած են և բռնում են փոքր տեղքեր են, և ստամբաւոր և խնձորենու տե-

բեններից փոքր ու նեղ: Ծաղիկներն սպիտակ են. պսակն ու բաժակը բաղկացած են հինգ-հինգ թերթերից:

Սալորենին սիրում է տաք օդ և խոնաւ հող. նա աւելի քնքոյշ բոյս է, քան խնձորենին. այդ պատճառով էլ սալորենին խնձորենու չափ երկար չի ապրում. նա շուտ էլ հասնում է. չորս տարեկան սալորենին արդէն պտուղ է տալիս: Նա յայտնի է իր պտղաբերութեամբ. պտղի առատութիւնից շատ տարի սալորենու տերևները չեն երևում, իսկ ճիւղերը ծուււմ, կախ են ընկնում:

Շատ պտղատու ծառերի պէս սալորենին ենթակայ է մի հիւանդութեան. այդ այն է, որ թրթուրն ուտում է նրա տերևները և փշացնում պտուղը. թրթուրը ոչնչացնում են կրաջրով և այլ միջոցներով:

Սալորն ունի ամուր կճեպով մի հատ մեծ կորիզ, այն ինչ, խնձորն ունենում է մի քանի մանր կորիզներ, բարակ կեղևով պատած: Սալորի մսային շերտը ջրալի է և բարակ կեղևով պատած:

Սալորի տեսակները շատ են. դրանցից յայտնի են ալուչէն, դեղնաշորը, դամբուր: Ալուչէն փոքր է, կլորիկ, գոյնը լինում է դեղին, կարմիր. համը՝ թթու,



Սալորենի. ա) ճիւղ. բ) պտուղ. գ) պտուղը միջից կտրւած.

քնոցը. դրանից պատրաստում են շրորաչիր: Իեղնաշյորը մեծ է և երկարուկ, գոյնը դեղին է, համը՝ քաղցր, թթւաշնա գովացուցիչ միրգ է. նրանից պատրաստում են մուրաբաներ, կօնսերվաներ և այլ քաղցրեղէններ: Դամբուլը տարբերում է գեղնաշյորից նրանով, որ աւելի մսոտ է և ունի մուգ կապոյտ գոյն:

Ծաղիկների, պտղի և սերմի կազմութեամբ սալորենուն նման են ծիրանի, դեղձի և գիլասի ծառերը:

### Վ Ա Ր Դ

Վարդը յծուշի է. նա անկած է լինում պարտէզներում, ճանապարհների երկու կողմերի վրա և ծաղկած ժամանակ պարտիզի զարդն է կաղմում:

Նա ունի բարդ տերև. այսինքն, տերևը բաղկացած է հինգ կամ եօթ տերևիկներից, որոնք շարւած են մի ընդհանուր կոթի վրա. տերևիկներից մէկը գտնւում է ընդհանուր կոթի ծայրին, իսկ միւսները գոյգ-գոյգ նստած են ընդհանուր կոթի վրա: Տերևիկները ձւածն են, իսկ եզրները առամնաւոր: Վարդի տեսակները շատ են, այդ պատճառով նրա ծաղիկները լինում են սպիտակ, դեղին, կարմիր և այլ գոյնի: Բաժակաթերթերը 5 հատ են, իսկ պտակաթերթերը շատ են:

Վարդի պտուղը ձւածն մի պարկ է, որի մէջ գտնւում են փոքրիկ մազոտ կորիզներ. դրանք վարդի սերմերն են: Պտուղը երբ հասնում է, կարմրում ու մսակալում է, բայց ուտելու համար անպէտք է:

Վարդի ճիւղերի վրա կան ծակող մանր փշեր. այդ փշերի շնորհիւ նրա ճիւղերը ազատ են մնում խոտակեր կենդանիների ատամներից. այդ նոյն փշերի շնորհիւ սոխակն ապահով կանգնում է վարդի ճիւղերի վրա և իր երգը երգում:

Մարդիկ վարդի վրա մեծ խնամք են տանում. նրան անկում են լաւ փափկացրած հողի մէջ, շուտ շուտ ջրում են, իսկ ձմեռները շատ անգամ փաթաթում են խոտով, որ ցուրար չ'փաստի նրան: Այսքան խնամք մարդիկ տանում են վարդի վրա նրա ծաղիկների պատճառով. ծաղիկը գեղեցիկ է, իսկ հոտն ախորժելի. նա համարում է ծաղիկների թագուհի: Վարդի ծաղիկներից հոտ ենք քաշում, նրանից պատրաստում ենք փնջեր սեղանները զարդարելու և մեր ծանօթներին ընծայելու համար: Բացի այդ, նրանցից պատրաստում են հոտաւէտ իւղեր, իսկ իւղերից պատրաստում են գովացուցիչ խմելիքներ և քաղցրեղէններ: Յայտնի է նաև վարդի մուրաբան:



Վ ա ղ .

Անուշահոտութեամբ յայտնի է մայիսեան վարդը, իսկ գեղեցկութեամբ՝ բազմաթերթ ամսական վարդը:

Վարդի մի տեսակը բուսնում է անտառներում, որին ասում են մատրի. վայրենի վարդի ծաղիկները փոքր են և անհոտ:

### Մ Ե Խ Ա Կ

Մեխակը բազմամեայ բոյս է, որ յայտնի է իր հոտաւէտ և գեղեցիկ ծաղիկներով:

Նա ունի յօդաւոր ցօղուն. յօդերի վրա կպած են լեզւաձև երկար տերևները՝ երկ-երկու իրար զիմաց: Գլխաւոր ցօղունը վերջանում է ծաղկով. ցօղունի վերի մասի տերևները լինում են փոքր. նրանց մէջտեղից զուրս են գալիս երկրորդական ցօղուններ, որոնք նոյնպէս վերջանում են ծաղկով: Յօղունը շատ անգամ ճիւղաւորւում է և միանգամից տալիս է մի քանի ծաղիկներ. ծաղիկները մեծ մասամբ լինում են բացկարմիր գոյնի. պսակաթերթերը հինգ հատ են, առէջները՝ 10 հատ, վարսանդը՝ մի քանի թելանի:



Մ Ե Խ Ա Կ.

Մեխակը բուսնում է ժայռոտ տեղերում և աւերակների մէջ վայրենի դրութեամբ, բայց հոտաւէտ և գեղեցիկ ծաղիկների պատճառով մարդիկ նրան ընտանեցրել են:

Ընտանեցրած մեխակը աճեցնում են պարտէզներում, իսկ ձմեռները դնում են ծաղկամանների մէջ և պահում սենեակներում:

Մարդկանց հոգացողութեան շնորհիւ այժմ կան մեխակի շատ տեսակներ, որոնք իրենց գոյնով և պսակաթեր-

թերի քանակութեամբ չեն տարբերում ամսական վարդից:

### Ա Ր Ե Ի Ա Ծ Ա Ղ Ի Կ

Արևածաղիկը միամեայ բոյս է: Նրա ցօղունը հաստ է և բարձր. ցօղունի միջուկն սպիտակ է ու փափուկ. տերևները մեծ են, անհարթ և ատամնաւոր. նրանք իրարից հեռու-հեռու շարւած են ցօղունի վրա տակից մինչև ծայրը: Յօղունը ճիւղեր չի արձակում, այլ վերջանում է մի ծայրով, որի վրա գոյանում է մի տափակ ու կլոր



Արևածաղիկ.

գլուխ. երբեմն ցօղունը ծայրում ճիւղաւորւում է և մի անգամից տալիս է մի քանի գլուխներ:

Արևածաղիկի գլուխը մի բարդ ծաղիկ է. այսինքն, կազմւած է բազմաթիւ փոքրիկ ծաղիկներից, որոնք տեղաւորւած են գլխի վրա շրջանաձև շարքերով. այդ պատճառով արևածաղիկի գլուխն անւանում են նաև հումամտիկ: Համածաղիկի իւրաքան-

չիւր փոքրիկ ծաղիկն ունի խողովակաձև դեղին պսակ, առէջներ և վարսանդ, որոնցից առաջ են գալիս՝ սպիտակ

միջուկով և ամուր կեղևով մի մի սերմեր: զրանք միևնոյն ժամանակ արեւածաղկի պտուղներն են: Համածաղկի եզրները զարգարւած են լեզւաձև դեղին ծաղիկներով: այս ծաղիկները սերմ չեն տալիս, բայց համածաղկին տալիս են գեղեցկութիւն:

Արեւածաղիկը սիրում է արև տեղ, այդ պատճառով նրան ցանում են բանջարանոցներում և անձառ տեղերում. բացի այդ, արեւածաղիկն իր գլուխը միշտ դարձրած է լինում արևի կողմը, որի համար էլ նա ստացել է արեւածաղիկ անունը:

Արեւածաղկի սերմերից ստանում են մեծ քանակութեամբ իւղ, որ գործ է ածւում կերակների և ուտելի-դէնների համար:

### Վ Ա Ր Ո Ւ Ն Փ

Վարունգը միամեայ բոյս է: Նրա ցողունը հաստ է ու մազոտ. նա փրու-ւած է լինում թըմ-բերի վրա ծուռ ու մուռ ճիւղերով. տե-րևները առաջնաւոր են և ունին երկար կոթեր. ծաղիկները մեծ են, պսակը զան-գակաձև ու դեղին. պտուղը երկարուկ ու մսոտ. պաղի մէջ լինում են բազմա-թիւ տափակ ու սրածայր սերմեր:



Վարունգ. ա) տունկը. բ) պտուղը.

Վարունգը շատ տարածւած և միևնոյն ժամանակ քնքոյշ բոյս է. եթէ նրա վրա լաւ խնամք չ'տանեն, նա հեշտութեամբ կ'չորանայ:


Վարունգն իբրև ուտելիք գործ են ածում դեռ ևս բոլորովին չ'հասած. նա համեղ է լինում մանաւանդ այն ժամանակ, երբ ծաղիկը ծայրին է. իսկ այն դէպքում, երբ ուզում են սերմ ստանալ, վարունգներից մի քանիսը թողնում են ցողունի վրա, մինչև որ նրանք բոլորովին հասնում են ու դեղնում. ապա դեղնած վարունգը քա-ղում են, արևի տակ չորացնում և սերմը միջից հանում:

Վարունգի տեսակները շատ են. լաւ տեսակը թթւի վարունգն է, որ համնում է աշնանը. այդ տեսակի վա-րունգը լցնում են քացախի մէջ և պահում են ձմեռայ համար: Մի քանի տեղերում վարունգը պահում են նաև աղաջրի մէջ:

### Լ Ո Ւ Թ Ի

Լոբին միամեայ բոյս է: Նրա ցողունը բարակ է, եր-կար ու գալարուղ. այդ պատճառով լոբու ցողունները փաթաթւում են հարևան բոյսերին և կամ յատկապէս նրանց համար գետնի մէջ խրած ձողերին ու վեր բարձ-րանում: Լոբու տերևները մեծ են և երեք-երեք հատ մի ընդհանուր կոթից կպած. ծաղիկները լինում են սպիտակ կամ կապտաւուն և կախւած են լինում մի քանիսը միա-սին, ինչպէս խաղողի ողկոյղը: Պտուղը մի երկարուկ պարկ է, երկտապակ կեղևից բաղկացած. պարկի մէջ շարւած են լինում լոբու հատիկները, որոնք ունենում են կլոր ու երկարուկ ձև. նրանք լինում են կարմիր, դեղին, սպիտակ և ուրիշ գոյնի. այդ հատիկները լոբու սերմերն են:

Լոբու հատիկներն ունին համեղ և սպիտակ միջուկ.



Լորի. ա) ճիւղն իր տերևներով և ծաղիկներով. բ) սերմը կամ պտուղը.

### Բ Ա Կ Լ Ա

Բակլայի ցօղունը լոբու ցօղունից հաստ է, բայց գալարեղ չէ, այլ ուղիղ բարձրացող: Տերևները երկարուկ են և սրածայր. ծաղիկներն սպիտակ են կամ բաց-կապտագոյն. հատիկը շատ նման է լոբու հատիկներին և գանազանուում է նրանցից իր մեծութեամբ: Բակլայի հատիկները լոբու հատիկների պէս շարեւծ են լինում երկա-

րուկ պարկի մէջ, որոնք հասնելուց յետոյ պատուում են և հատիկները միջից թափուում: Բացի այդ, բակլայի հատիկները լոբու հատիկների պէս ունին սպիտակ միջուկ և համեղ են. դրանցից պատրաստում են կերակրներ, մանաւանդ լեռնոտ տեղերում, ուր դաշտային բոյսեր չեն աճում:

Բակլայի պարկը կարճ է լինում և աւելի քիչ հատիկներ է ունենում իր մէջ, քան լոբու պարկը:



Բակլայի տունկը. ա) սերմը կամ պտուղը.

### Ս Ի Ս Ե Ռ

Սիսեռի տերևները բարդ են. նրանք բաղկացած են մի քանի տերևիկներից. տերևիկները գոյգ-գոյգ նստած են ընդհանուր կոթի վրա. ընդհանուր կոթը վերջանում է բարակ թելիկներով. սիսեռի ցօղունը բարակ է, դալար և շուտ թեքուող, որպէս զի ցօղունը կախ չընկնի և տերևները կարողանան բաւականաչափ լոյս և օդ ստանալ. ցօղունը այդ թելիկների միջոցով փաթաթուում է հարեան բոյսերին և վեր բարձրանում: Սիսեռի ծաղիկն սպիտակ է ու

քիչ կապտաւուն և բաղկացած է հինգ անհաւասար պսակաթերթերից, նա բաւականին խոշոր է և իր ձևով նման է նստած թիթեռին. որի պատճառով էլ սիսեռը կոչուում է թիթեռնաժաղիկ բոյս. իրենց ծաղիկների նմանութեամբ թիթեռնաժաղիկ կոչուում են նաև լոբին և բակլան: Սիսեռի ծաղկի առէչները 10 հատ են, վարսանդը մի թելանի: Պտուղը փոքր է, կլոր, գոյնը դեղին և կանաչաւուն:



Սիսեռի տունկը. ա) սերմը կամ պտուղը.

պատուում է և սերմերը թափւում են:

Սիսեռի հատիկները համեղ են և սննդարար. նրանցից պատրաստում են զանազան կերակուրներ, մանաւանդ, պաս օրերին:

Ո Ս Պ

Ոսպի ցօղունը բարակ է, բայց ամուր և ուղիղ բարձրացող. տերևները բարդ են, իսկ տերևիկները շատ փոքր, որոնք փետրածե շարւած են ընդհանուր կոթի վրա. տերևները վերջանում են շատ բարակ թելիկներով: Ծաղիկները սպիտակ-կապտաւուն են և երկու-երկու կամ երեք-երեք կպած են մի ընդհանուր կոթի վրա: Ոսպի պտուղը նոյնպէս մի պարկ է, բայց լոբու և սիսեռի պտուղների պէս երկար չէ, այլ կարճ է, փոքր և ծայրը թերաս: Պարկի մէջ լինում են երկու փոքրիկ, կլոր ու տափակ հատիկներ. դրանք ոսպի սերմերն են, միևնոյն ժամանակ նրա պտղի հատիկները:



Ոսպ. ա) տունկը. բ) սերմը. գ) պտուղը.

Ոսպը ցանում են բաց դաշտերում. նա աճում է շատ հեշտութեամբ և նոյնիսկ առանց ջրելու. նա առանձին խնամք չի պահանջում:

Ոսպի հատիկներն ունին սննդարար միջուկ. նրանք համեղ են. նրանցից գիւղերում, մանաւանդ լեռնային աղքատ գիւղերում, պատրաստում են կերակրներ:

## Հ Ա Ն Ք Ե Ր

Մենք կանգնած ենք գետնի վրա. եթէ գետինը փո-  
րենք և իջնենք նրա խորքը, ճանապարհին կ'պատահենք  
շերտ-շերտ ընկած տեսակ-տեսակ հողերի, քարերի և ջրե-  
րի. դրանց ընդհանուր անունով ասում են հումքային  
նիւթեր: Այդպիսի հանքային նիւթեր են կաւը, աւազը,  
աւազաքարը, աղը, քարածուխը, նաւթը և սնդիկը: Այժմ  
էլ ծանօթանանք դրանց հետ. որովհետեւ երկիրը, որի վրա  
մենք ապրում ենք, կազմւած է այդպիսի հանքային նիւ-  
թերից, որոնք պէտք են գալիս մեր ամենօրեայ կարիք-  
ների համար:


## Կ Ա Ի

Կաւ ասում ենք հողի այն տեսակին, որից ամաններ  
են պատրաստում:

Կաւը գտնւում է գետնի մէջ շերտերով. նրան կա-  
րելի է պատահել ամեն տեղ. իսկական կաւը սպիտակա-  
ւուն է լինում, բայց զուտ տեսակը շատ քիչ է պատա-  
հում. սովորաբար նա խառն է լինում հողի ուրիշ տեսակ-  
ների հետ և, նայած խառնուրդին, նա ունենում է շէկ,  
կարմրաւուն և սև գոյն: Կաւը թաց եղած ժամանակ խմո-  
րի պէս թանձր է, իսկ չոր դրութեամբ լինում է կոշտ  
և ամուր, այնպէս որ, եթէ մուրճով խփենք, կ'փշրւի:

Եթէ կաւի կոշտը մօտեցնենք մեր լեզւին, նա կ'կպչի  
նրան. եթէ մեր մատը ջրի մէջ թաց անենք և կրպ-

ցնենք կաւի կոշտին, մեր մատն իսկոյն կ'ցամաքի. այդ  
նրանից է, որ կաւը մեր լեզւի թուքը և մատի վրայի  
ջուրը ծծում է իր մէջ: Եթէ կաւի վրա ջուր լցնենք, նա  
կաւի միջից չի անցնի, այլ բաւականաչափ նրա մէջ  
ծծելուց յետոյ, կ'լճանայ նրա փոս տեղերում. իսկ եթէ  
կաւը դցենք ջրի մէջ ու երկար խառնենք, նա կ'խառնւի  
ջրին և ջուրը կ'պղտորւի, բայց մի փոքր սպասելուց յե-  
տոյ կ'տեսնենք, որ կաւը հետզհետէ նստում է ջրի տակ  
և շերտ կազմում:



Կաւից ամաններ են շինում.

Բացի այդ, կաւն ունի երկու այլ յատկութիւն. նախ՝  
թաց կաւը լինում է մւսժողովի և մեռուռն (ձգուղ). այդ  
դրութեամբ նրան ինչ ձև որ ուզենանք, կ'տանք. երկ-  
րորդ՝ թէժ կրակի մէջ կաւը չի այրւում և ոչ էլ հալւում

է, այլ շիկանում, կարծրում է ու քարանում, այսինքն թրձնում է, իսկ թրձեաձ կաւը ջրից այլ ևս չի փափկում: Կաւի այս երկու յատկութիւններից օգտւելով, մարդիկ նրանից պատրաստում են պանազան մեծութեան և ձեւի կարասներ, կժեր, ամաններ, որ պատրաստում են վարպետ մարդիկ և կանայք, որոնց ասում են թրտուներ: նրանք ունին ոտով շարժւող հասարակ մեքենաներ և թրձելու համար մեծ քոյրաններ: Փոքր ամաններն ամուր և գեղեցիկ դարձնելու համար ներսի կողմից նրանց պատերը ծածկում են ապակեման նիւթով:

Չուա կաւը բուսականութեան համար անպէտք է. այդ նրանից է, որ կաւը շոգ ժամանակ քարանում է, ճաքճքում, իսկ անձրևոտ ժամանակ դառնում է թանձր ցելի. դրա համար էլ կաւի մէջ ընկած սերմի արմատները կարատւում են, չորանում կամ փտում:


## Ա. Ի Ա. 2

Աւազ լինում է ամեն տեղ՝ գետնի երեսին, հողի տակ, գետերի ափին և ծովերի յատակում. երբեմն անազին տարածութիւններ ծածկեաձ են լինում աւազով. դրանք անապատներն են:

Աւազը բազկացած է մանր հատիկներից. նրանք լինում են զանազան գոյնի և մասամբ թափանցիկ են, այդ պատճառով մաքուր աւազը բաց-մոխրագոյն է: Աւազը շատ փխրուն է և շաղ եկող. թաց ժամանակ դեռ կարելի է լինում նրան մի կերպ իրար կպցնել, բայց հէնց որ չորանում է, սկսում է շաղ գալ. այս է պատճառը, որ աւազը հեշտութեամբ քամիներից բշտում է մի տեղից միւսը և բլուրներ գոյացնում:

Աւազը ջրին խառնելիս, ջուրը չի պղտորւում, այն

ինչ, կաւ խառնելիս, ջուրը պղտորւում է. այդ նրանից է, որ աւազի հատիկները ջրի մէջ չեն լուծւում և ջրին խառնելիս իսկոյն նստում են նրա տակը. եթէ մենք կաւն ու աւազը միաժամանակ խառնենք ջրին, նախ ջրի տակը կ'նստի աւազը, իսկ մի փոքր յետոյ, աւազի շերտի վրա կ'նստի կաւի շերտը. այսպիսով, կաւն ու աւազը ջրի միջոցով կարելի է իրարից շոկել: Բացի այդ, եթէ մազի վրա աւազ լցնենք, իսկ աւազի վրա՝ ջուր, ջուրն ամբողջապէս աւազի միջից կանցնի և կ'թափւի մազի տակ. այդ



Երկար խողովակներով ապակեայ շէնք են շինում.

նրանից է, որ աւազն իր մէջ ջուր չի պահում. այս է պատճառը, որ աւազոտ տեղերում անձրևից ցելի չի գոյանում:

Աւագը կրակի մէջ չի այրուում, չի հալուում, ոչ էլ կաւի պէս թրձուում է, այլ միայն տաքանում է և սառելուց յետոյ մնում է նոյն աւագը:

Բայց երբ աւագին խառնում են կրակի և կրակից, այդ ժամանակ աւագը կրակի տաքութիւնից հալուում է, դառնում է թափանցիկ, ձէլուն հեղուկ, որից պատրաստում են տեսակ-տեսակ արարելուց իրեր: Ապակեայ իրերը պատրաստում են երկու կերպ. մէկ՝ որ այդ հեղուկը լցնում են կտրուկներով մէջ ու սառեցնում, իսկ միւր՝ որ երկար խողովակների մի ծայրով վերցնում են այդ հեղուկից, իսկ միւս ծայրից փչելով, կամաց կամաց սառչող հեղուկը ուռեցնում և նրան տալիս են իրենց ցանկացած ձևը:

Բացի այդ, եթէ աւագին կիր ու ջուր խառնենք, նրանք կ'կաշեն իրար և չորանալուց յետոյ կ'քարանան. այդ յատկութիւնից օգտուելով, ամուր պարբիսպները, խոշոր աները, վանքերն ու բերդերը շինում են աւագի և կրի շտրախով:

Չուտ աւագը բուսականութեան համար անպէտք է. նախ՝ որ փխրուն է և նրա մէջ բոյսն արմատ չի կարողանում բռնել և երկրորդ՝ որ աւագը իր մէջ ջուր չի պահում, իսկ առանց ջրի՝ բոյսերը աճել չեն կարող: Միայն մի քանի բոյսեր աւագի մէջ կարողանում են արմատ բռնել, այն էլ, եթէ աւագի մէջ լինում է շատ ու քիչ խառնուրդ. այդ բոյսերի ծառայութիւնը կայանում է նրանում, որ նրանք իրենց արմատներով կապկպում են աւագը և սա այլ ևս քամիներից չի քշուում և հեռաւոր բուսականութիւնները չի ծածկում:

### Պ Ա Ր Տ Ի Զ Ի Հ Ո Ղ Ը

Պարտիզի հողը սև է, փխրուն և խոնաւ. նա բաղկացած է զանազան նիւթերից. այդ նիւթերի հետ ծանօթանալու համար վերցնենք 100 մսխալ պարտիզի հող:

Եթէ մենք այդ 100 մսխալ հողը արեւի տակ կամ վառարանի վրա լաւ չորացնենք և ապա կշռենք, կ'տեսնենք, որ քաշից մի քանի մսխալ պակասել է. այդ պակասածը հողի միջի խոնաւութիւնն էր կամ ջուրը, որը գոլորշիացաւ հողը չորացնելիս. ուրեմն պարտիզի հողի մի մասը ջուր է:

Եթէ չորացած հողը պղնձէ ամանով դնենք կրակի վրա և թողնենք որ նա շիկանայ, կ'տեսնենք, որ նրանից ծուխ է բարձրանում և ծանր հոտ է տարածուում. միւս կողմից, նրա սևութիւնը կորչում է և նա դառնում է շէկաւուն. եթէ շէկացած հողը կշռենք, կ'տեսնենք, որ նրա քաշից նորից պակասել է մի 10—20 մսխալ. այդ պակասածը հողի այն մասն է, որը սև գոյն ունէր և այրուում էր. այդ այրուող մասը կոչում է բուսահող. ուրեմն պարտիզի հողի մի մասն էլ բուսահող է:

Եթէ շիկացած հողը լցնենք ջրի մէջ, ջուրը երկար խառնենք և թողնենք, որ նա հանդարտուի ու հողը նստի ջրի տակ, ապա ջուրն առանձին վերցնենք, գոլորշիացնենք, իսկ հողը լաւ չորացնենք և կշռենք, կ'տեսնենք, որ հողի քաշից նորից մի երկու մսխալ պակասել է, իսկ գոլորշիացած ջրից ամանի մէջ մնացել է մի երկու մսխալ աղ. ուրեմն պարտիզի հողի մի փոքր մասն էլ աղ է, որը լուծւեց ջրի մէջ և ջրի գոլորշիացումից յետոյ մնաց ամանի յատակում:

Եւ եթէ վերջին մնացած հողը նորից լցնենք ջրի մէջ, ջուրը լաւ խառնենք և թողնենք որ հանդարտուի, կ'տես-

նենք, որ ջրի տակ հողից երկու շերտ է գոյացել՝ տակի շերտն աւազ է, իսկ վրայի շերտը կաւ է. դրանց կարելի է ջուկ-ջուկ վերցնել և կշռել. ուրեմն պարտիզի հողի մասերն են նաև կաւն ու աւազը:


Այսպիսով, իմացանք, որ պարտիզի հողը բաղկացած է ջրից, աղից, կաւից, աւազից և բուսահողից. ջուրը, աղը, կաւն ու աւազը մեզ ծանօթ են. բայց ի՞նչ բան է բուսահողը:

Բուսահողը գոյանում է բոյսերի և կենդանիների փտումից. ամեն տարի անագին քանակութեամբ բոյսեր և կենդանիներ ընկնում են հողի մէջ և գետնի վրա, մեռնում ու փտում են. ամեն տարի կենդանիներն ու որդունքը մի կողմից, մարդն իր գութանով ու բահով միւս կողմից քանդում, իրար են խառնում բուսահողը և գետնի հողը, որ բաղկացած է գլխաւորապէս կաւից ու աւազից. անա բուսահողի, կաւի ու աւազի այդ խառնածքից առաջ է եկել ինչպէս պարտիզի հողը, նոյնպէս և վարելահողը: Բուսահողը պարտիզի հողի ամենահիւթալի մասն է. նա ծծում է իր մէջ խոնաւութիւն, տալիս է պարտիզի հողին փափկութիւն և բոյսերի արմատներին՝ սնունդ. չլինէր բուսահողը, բոյսերը չէին աճի ոչ կաւի և ոչ էլ աւազի մէջ: Բուսահողը գոյանում է նաև մարդու և կենդանիների աղբից. այդ է պատճառը, որ հողը պարարտացնելու համար նրան խառնում են աղբ:

Պարտիզի հողին ազն էլ անհրաժեշտ է. ինչպէս որ ազն անհրաժեշտ է մարդկանց և կենդանիներին, այնպէս էլ անհրաժեշտ է բոյսերին. բոյսերն իրենց արմատներով ծծում են թաց հողի միջի աղերը:

Վարելահողը լինում է մի քանի տեսակ: Այն հողը, որի մէջ բուսահողը շատ է, կոչւում է սեռահող. սեահողը լինում է փուխը, հեշտ մշակւող և պտղաբեր: Այն հողը,

որի մէջ կաւը շատ է, կոչւում է կաւահող. կաւահողը լինում է կաշնուն և դժւար մշակելի: Այն հողը, որի մէջ աւազը շատ է, կոչւում է աւազահող. աւազահողը լինում է չոր և տաք. նրա մէջ յաջող կերպով բուսնում են տաքութիւն սիրող բոյսեր:



Աւազի, բուսահողի և կաւի շերտերը.

Վարելահողի տեսակը որոշելու համար պէտք է վերցնել այդ հողից, լցնել ջրի մէջ, լաւ խառնել և թողնել, որ հանդարտւի. հանդարտւելուց յետոյ ջրի տակ կ'նստի հողի երեք շերտ. դրանցից տակի շերտն աւազն է, միջին շերտը բուսահողն է, իսկ վրայի շերտը կաւն է. այդ երեք շերտերը կարելի է ջուկ-ջուկ վերցնել և կշռել և նրանց քանակութիւնով որոշել հողի տեսակը:

## Ա Ի Ա Չ Ա Ք Ա Ր

Ինչպէս անունը ցոյց է տալիս, աւազաքարը գոյացել է աւազի քարանալուց:

Գետերը հոսելով, իրենց հետ քշում-տանում են մեծ քանակութեամբ աւազ. այդ ցոյց են տալիս նրանց աւազոտ ափերն ու յատակները: Աւազը գետերի մէջ գալիս թափւում է լեռնային գետակներից և հեղեղներից, որոնք սարերի ու ձորերի թափիթփած և կտոր-կտոր եղած քարերը քշելով ու բերելով, նրանց ջարդում մանրացնում են ու աւազ դարձնում: Գետերը գնում, թափւում են

ծովերի մէջ, իրենց հետ տանելով աւազը, որը շերտ-շերտ նստում է ծովերի յատակում: Գետերն իրենց հետ տանում են նաև կաւ, կիր և այլ նիւթեր, որոնք նոյնպէս գնում նստում են ծովերի յատակում, աւազի շերտերի վրա և ծծւում աւազի շերտերի մէջ: Հազարաւոր տարիների ընթացքում գետերի տարած աւազը, կաւը, կիրը դիզւելով ծովերի յատակում բարձրանում, ու բարձրանում են, իսկ յատակի բարձրանալուց՝ ծովի շուրջ քանդելով և ողողելով ափերի հողը, նոր ափեր է կազմում. բացի այդ, երկրի կեղևը զանազան պատճառներից տեղ-տեղ երբեմն բարձրանում է, իսկ տեղ-տեղ իջնում, որով ծովի յատակը մի տեղ դառնում է ցամաք, իսկ մի այլ տեղ ցամաքը դառնում է ծով: Ահա այդ ցամաքած ծովի տեղումն է, որ աւազը, կաւը, կիրը ջրի ազդեցութիւնից և անազին շերտերի ծանրութիւնից կպել, միացել, քարացել են և աւազաքարի անազին շերտեր գոյացրել, որոնց այժմ մենք պատահում ենք հողի շերտերում: Այդպիսով, այն տեղերում, ուր այժմ աւազաքարի շերտեր կան, մի ժամանակ եղել է ծով:

Ուշադրութեամբ դիտելով աւազաքարի կտորները, նրանց վրա կ'նկատենք աւազի հատիկներ և ուրիշ կարծր նիւթերի խառնւածք. նայած այդ խառնուրդին, աւազաքարը լինում է դեղնագոյն, մոխրագոյն և կարմրագոյն:

Աւազաքարը համարւում է արժէքաւոր քար. նրանից շինում են տներ, նրա ամուր և կարծր տեսակից պատրաստում են ջրաղացի քարեր, իսկ փափուկ տեսակից պատրաստում են գործիքներ սրելու յեսաններ:

Ս. 7


Այն ազր, որ մենք գործ ենք անում կերակրի մէջ և ամեն օր ճաշելիս գրւած է լինում մեր սեղանի վրա, լինում է մեծ կտորներով. գործ անելու համար նրան ծեծում, մանրացնում են:

Եթէ մենք մի կտոր աղ գցենք ջրի մէջ և սկսենք շուրջ խառնել, կ'նկատենք, որ աղը կամաց կամաց լուծւում է ջրի մէջ, այն ինչ, կաւը և աւազը ջրի մէջ չեն լուծւում: Եթէ այդ աղաջուրը մէկ ամանով դնենք կրակի վրա կամ արևի տակ և գոլորշիացնենք, ամանի յատակում կ'մնայ մանր աղ. դա մեր լուծած աղն է, որը մնում է ամանի յատակում շուրջ գոլորշիացնելուց յետոյ:

Աղը շատ զգայուն է. եթէ նրան դնենք խոնաւ տեղ, շուտով կ'թացանայ. նոյնպէս կ'թացանայ, եթէ եզանակը անձրևային լինի, իսկ չոր տեղերում, ընդհակառակն, թաց աղը չորանում է. այդպիսով, աղի միջոցով հեշտութեամբ կարելի է իմանալ բնակարանի խոնաւութիւնն ու չորութիւնը:

Այն անազին շերտերով ընկած է գետնի տակ և վերևից ծածկւած է հողային շերտերով. աղ ստանալու համար գետինը ծակում են և հասնելով աղի շերտին, սկսում են այդ շերտը կտրել և առաջ գնալ. և որպէս զի վերևից աղաշերտը չ'թափւի, փորւածքի մէջ թողնում են սիւներ և իրար մէջ սենեակներ բացելով առաջ գնում: Այդպիսի աղահանքեր գտնւում են Կողբի, Նախիջևանի և Կաղզւանի մօտերքում: Աղը կտրում են մեծ-մեծ կտորներով. դրանց ասում են ազաքար. ազաքարի մէջ երբեմն պատահում են սառուցի և ապակու պէս մաքուր, թափանցիկ մեծ բիւրեղանման կտորներ. այդպիսի կտորներից շինում են սեղանի գարգեր:

Աղ ստանում են նաև աղային աղբիւրներից: Աղային աղբիւրները գոյանում են գետնի տակ գտնուող ջրերից, որոնք հոսելով աղային շերտի միջով, աղիանում են: Այդ աղբիւրներից դուրս հոսած կամ դուրս քաշած աղաջուրը լցնում են լայն փոսերի մէջ. մի քանի օրւայ ընթացքում արևի տաքութիւնից ջուրը գոլորշիանում է, իսկ աղը սպիտակ խոշոր աւազի ձևով նստում է փոսերի յատակում:



Ծովային ջուրը գոլորշիացնում, աղ են ստանում.

Բացի այդ, աղ ստանում են նաև ծովային ջրից. ծովերի ջուրը լինում է աղի. այդ աղիութեան պատճառը գետերն են. նրանք հազարաւոր տարիների ընթացքում գալիս թափում են ծովերի մէջ, իրենց հետ բերելով աղային լուծւածքներ: Այդ բոլոր գետերի ջրերի մէջ կայ, բայց այնքան քիչ, որ մենք չենք գգում: Ծովերի ջրերը շարունակ գոլորշիանում են. այդ պատճառով էլ որքան նրանց մէջ գետեր են թափում, ջուրը չի շատանում, այն ինչ, աղային մասերը շարունակ աւելանալով, ջուրն աւելի ևս աղիացնում են: Ծովերի ափին շինում են մեծ փոսեր. ծովի

ջուրը բաց են թողնում այդ փոսերի մէջ, որտեղ մի քանի օր ֆնալով, ջուրը գոլորշիանում է, իսկ աղը նստում է փոսերի յատակին. այդպիսի աղը կոչւում է ծովային աղ: Ծովային աղը թէև տեսքով մաքուր, բայց դառն է լինում. այդ նրանից է, որ ծովի ջուրն աղի է և դառն:

Աղը շատ անհրաժեշտ նիւթ է. կերակրին համ տուող աղն է. ձմեռւայ պաշարի մեծ մասը աղաջրի մէջ են պահում, որ չ'հոտի: Եզանը, կովին, ձիուն, ոչխարին էլ աղ են տալիս. աղի հետ միասին հողի մէջ գտնւում են նաև այլ աղեր, որոնցից բոյսերն իրենց արմատներով սնունդ են ստանում:


## Ք Ա Ր Ա Ծ Ո Ւ Ն

Քարածուխը սովորական ածուխի պէս սև է, բայց նրանից ծանր է և ամուր. այրելիս նա արձակում է կապոյա բոց և ծանր հոտ:

Քարածուխը շերտ-շերտ ընկած է գետնի տակ. քարածուխ ստանալու համար գետինը ծակում են և անցքեր են բացում դէպի նրա շերտերը, որոնք շատ անգամ գտնւում են հարիւրաւոր սածէն խորութեան մէջ: Հասնելով քարածուխի շերտին, շերտն սկսում են քանդել և վերստերով առաջ գնալ. դա քարածուխի հանքն է: Մարդիկ քարածուխի հանքի մէջ իջնում և բարձրանում են մեքենաներով. մեքենաներով էլ դուրս են բերում քարածուխը: Հանքի մէջ մուժն է լինում. այդ պատճառով մարդիկ իրենց հետ տանում են լամպաներ. հանքի մէջ օդը լինում է տաք և ծանր. դա առաջ է գալիս երկրի ներսի տաքութիւնից. այդ պատճառով օդափոխութեան համար բարձրից թողնում են անցքեր: Բացի այդ, հանքի մէջ քարածուխից գոյանում են գանազան գազեր, որոնք շատ անգամ բռնկւելով, հանքի

շերտերը փուլ են ածում և մարդկանց տակը թողնում: Այդպիսով, քարածուխի հանքերում աշխատելը շատ ծանր է և վտանգաւոր:

Սովորական ածուխի պէս քարածուխը գոյանում է փայտից: Հազարաւոր տարիներ առաջ երկրի մեծ մասը ծածկւած էր անտառներով. ամեն տարի ահագին քանակութեամբ ծառեր չորանում,



թափւում էին իրար վրա, իսկ հեղեղների ժամանակ գետերն ու հեղեղաանները դրանց քշում, տանում էին դէպի ճահիճները, լճերն ու ծովերը: Այսպէս, հազարաւոր տարիների ընթացքում գետերի և հեղեղների բերած ծառերն ու գերաններն իրար վրա դիզելով, թրջւում, ծանրանում էին և իջնում ճահիճների ու ջրերի տակ. ապա դրանց վրա գալիս շերտ-շերտ նստում էին գետերի և հեղեղների բերած կանն ու աւազը. կաւի և աւազի վրայից նորից ու նորից կազմւում էին ծառերի, գերանների, կաւի և աւազի շերտեր,

Քարածուխի շերտում դուրս է եկել քարացած և ածուխ գտած ծառի բունը.

մինչև որ ճահիճների, լճերի և ծովերի յատակը ջրից բարձրանալով, ցամաքում էր: Ծառերի և գերանների այդ շերտերը ջրի մէջ երկար մնալով ու սևանալով, կաւի և աւազի ահագին շերտերի ծանրութեան տակ իրար կպչելով ու քարանալով, դարձել են այն քարածուխը, որ այժմ մար-

դիկ գետնի տակից հանում են ու վառում: Շատ անգամ քարածուխի շերտի մէջ գտնւում են ահագին ծառի բներ, ճիւղեր և տերևներ, որոնք սկայած և քարացած մնացել են մինչև այժմ:

Քարածուխը շատ օգտակար հանք է. փայտից և նաւթից աւելի շատ գործ են ածում քարածուխ. այդ նրանից է, որ քարածուխը համ է ժան է, համ էլ շատ տաքութիւն է տալիս: Այժմ քարածուխով տաքացնում են վառարանները, նաւերի և երկաթուղիների շոգեկաթսաները և գործարանների մեքենաները: Եթէ քարածուխը չ'լինէր, անտառների մեծ մասը մարդիկ այժմ ոչնչացրած կ'լինէին:

### Ն Ա Ի Թ

Մեր աներում ամեն օր գործաճուղ մաքուր նաւթն ստացւում է հում նաւթից, որ լինում է թանձր և ունի սև-կանաչաւուն պղտոր գոյն: Հում նաւթը հանքային նիւթ է և մեծ քանակութեամբ գտնւում է գետնի ստորին շերտերի մէջ: Հում նաւթ ստանալու համար մեքենաներով գետինը ծակում, անցքի մէջ երկաթէ խողովակներ են հազցնում և այդպէս ծակելով ու ծակելով, հասնում են նաւթի շերտերին: Երբ անցքը բոլորովին պատրաստ է լինում, սկսում են դուրս քաշել նաւթը, որ շատ անգամ գտնւում է հարիւրաւոր սաժէն խորութեան մէջ: Բայց պատահում է, որ նաւթը ծակած անցքից սկսում է շատ րւանի պէս ուժով դուրս նետուել. այդ նրանից է, որ նաւթի շերտերում գոյանում են գազեր, որոնք մեծ ճնշում գործելով նաւթի շերտի վրա, նաւթը շատ րւանի պէս դուրս է նետւում: Նաւթի շատ րւանը երբեմն այնքան ուժեղ է լինում, որ իրեն հետ գետնի տակից դուրս է

չպրտում քարեր, որոնք օդի մէջ իրար գարկւելով, կայծեր են առաջացնում, իսկ կայծերից նաւթի հետ դուրս թռչող գազերը բռնկւելով, հրդեհ են առաջ բերում. այդ հրդեհը նման է լինում օդի մէջ կախւած հրեղէն սիւնի: Որպէս զի նաւթի շատրւանից հրդեհներ չ'առաջանան և դուրս թափւող նաւթը չ'փչանայ, նաւթահորերի բերանին շինում են արգելիչներ. բացի այդ, նաւթահորերի վրա մեքենաների համար շինում են բարձր աշտարակներ:



Նաւթի շատրւանը.

Ամենալաւ նաւթահանքերը գտնւում են Բագու քաղաքի մօտ:

## Ս Ն Դ Ի Կ

Մնդիկին մենք ծիլա ենք ասում. նա ջրի պէս հեղուկ

է և արծաթի պէս սպիտակ ու փայլուն է, բայց շատ ծանր:

Մնդիկն ստացւում է գետնի տակից. նա խառնւած է լինում ուրիշ հանքային նիւթերի հետ. այդ նիւթերը գտելով, ստանում են մաքուր մնդիկ. պատահում է նաև, որ մնդիկը կաթիլ-կաթիլ ընկած է լինում կաւային շերտերի ճեղքւածքների մէջ:

Մնդիկը խիստ սառնամանիներին սառչում է և արձիճի պէս ամուր մետաղ է դառնում, իսկ թէժ կրակի վրա դնելիս, եփ է գալիս և գոլորշիանում է:

Եթէ մնդիկը կաթեցնենք սեղանի կամ ապակու վրա, նա փոքրիկ գնդակի ձև կ'ստանայ և մի թեթև շարժումից կ'սկսի այս ու այն կողմ վազվզել և ցած թափւել. այդ նրանից է, որ մնդիկը սեղանին և ապակուն չի կպչում և նրանց չի թացացնում, այն ինչ, նա շատ հեշտութեամբ կպչում է մետաղներին և նրանց փայլ տալիս: Բացի այդ, արծաթը և ոսկին մնդիկի մէջ լուծւում, միանում են նրան:

Մնդիկի այս յատկութիւնից օգտւելով, մարդիկ նրան գործ են ածում շատ բաներում. այսպէս, մետաղները ոսկեջրելու համար ոսկին նախ լուծում են մնդիկի մէջ, ապա քսում են մետաղին, որից յետոյ մնդիկը գոլորշիացնում են և մետաղի վրա մնում է միայն ոսկին:

Հանքերում ոսկին հողից գտելու համար զարձեալ դիմում են մնդիկի օգնութեանը. չ'գտւած ոսկին լցնում են մնդիկի մէջ. ոսկին լուծւելով և մնդիկին միանալով, հողային մասերից զատւում է. ապա մնդիկը գոլորշիացնելով ստանում են զուտ ոսկի:


Մնդիկին միանում է նաև անազը կամ կլէկը. մնդիկի և կլէկի խառնուրդով ծածկում են հաստ ապակիների մի երեսը և ստանում են հայելիներ: Բացի այդ, մնդիկը տաքութիւնից ընդարձակւում է. այդ յատկութիւնից օգտւելով, նրանից պատրաստում են ջերմաչափեր:

Handwritten notes and signatures at the top of the page.

# ԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՅՐՆԵՐ

## Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր

Մենք որ կողմն էլ շուռ գանք, ուր էլ գնանք, ամեն տեղ կ'պատահենք քարի, փայտի, հողի, ջրի, մառախուղի և հազար ու մի առարկաների. այդ բոլորը մի ընդհանուր անունով կոչուում են մալդիաններ: Եթէ ուշադրութեամբ դիտենք, կ'տեսնենք, որ այդ մարմինները տարբերուում են միմեանցից:



1) Կարծր մարմին, 2) հեղուկ մարմին, 3) գազանման մարմին.

Կան մարմիններ, որոնց կարելի է վերցնել ձեռքի վրա, շոշափել նրանց և ինչպէս էլ ցած գնենք նրանց, այնպէս էլ կ'մնան. այդպէս են՝ երկաթը, քարը, փայտը, կաւիճը. այդպիսի մարմինները կոչուում են կարծր մալդիաններ:

Կան մարմիններ, որոնց կարելի է պահել միմիայն

խոր ամանի մէջ. նրանք մշտական ձև չունին և ստանում են այն ամանի ձևը, որի մէջ գտնուում են նրանք. այդպէս են՝ ջուրը, նաւթը, գինին. այդպիսի մարմինները կոչուում են նեղուկ մալդիաններ:

Կան մարմիններ էլ, որոնց կարելի է պահել միմիայն բերանը փակ ամանի և կամ փամփուշտի մէջ, իսկ եթէ ամանի կամ փամփուշտի բերանը բացենք, նրանք կ'ցնդեն օդի մէջ. այդպէս են՝ այլուղ փայտի ծուխը, օդը. այդպիսի մարմինները կոչուում են գազային մալդիաններ:

Մեզ շրջապատող մարմիններից որն էլ վերցնելու լինենք, նա կ'լինի կամ կարծր, կամ հեղուկ և կամ գազանման. այսպիսով բնութեան մէջ եղող բոլոր մարմինները բաժանուում են երեք կարգի՝ կարծր, հեղուկ և գազանման:

## Ջ Ե Ր Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Ջերմութեանը մենք սովորական բառով ասում ենք տաքութիւն: Ջերմութիւնը մի անհրաժեշտ ուժ է. նրանով է, որ երկիրը զարդարուում է ծառերով, ծաղիկներով և խոտերով. նրանով է, որ կենդանիներն աճում, բազմանում են. չլինէր Ջերմութիւնը, կեանքը կ'մեռնէր, բուսականութիւնը կ'չորանար: Եթէ գարնանը բոյսերը կանաչում են, կենդանիները դուրս են գալիս իրենց բնակից, այդ Ջերմութիւնից է. եթէ ձմեռը բոյսերը տերևաթափ են լինում, կենդանիներն իրենց բներն են քաշում, այդ Ջերմութեան պակասութիւնից է:

Բնական և արհեստական Ջերմութիւն:— Ջերմութիւնը մենք ստանում ենք արեգակից: Արեգակը մեր երկրից շատ ու շատ մեծ մի հրեղէն գունդ է, որից մեր երկրի վրա ընկնում են ճառագայթներ. այդ ճառագայթ-

հերն իրենց հետ բերում են Չերմութիւն, որով ծաղկում  
և աճում է ամբողջ բնութիւնը: Արեգակից ստացւող Չեր-  
մութիւնը կոչւում է բնական Չերմութիւն. այդպիսով,  
բնական Չերմութեան աղբիւրն արեգակն է:

Ձմեռները, երբ արեգակը թեքւում է դէպի հարաւ  
և նրա Չերմութիւնը պակասում է, ցրտից չ'նեղւելու հա-  
մար մեր բնակարաններում դնում ենք վառարաններ,  
նրանց մէջ կրակ ենք վառում և Չերմութիւն ստանում.  
վառարանից ստացւող այդ Չերմութիւնը կոչւում է ար-  
հեստական Չերմութիւն. այդպիսով, արհեստական Չերմու-  
թեան աղբիւրը վառարանն է:

*Ձերմութեան տարածւելը մարմնների միջով:*—  
Չերմութիւնը տարածւում է թէ կարծր, թէ հեղուկ և թէ  
գազային մարմինների միջով: Եթէ երկաթէ ձողի մի ծայ-  
րը դնենք կրակի մէջ, մի փոքր անցնելուց յետոյ կ'տաքանայ  
նաև ձողի՝ կրակից դուրս մնացած ծայրը. այդ նրանից է,  
որ կրակի Չերմութիւնը ձողի մի ծայրից երկաթի միջով  
տարածւեց և հասաւ միւս ծայրը: Եթէ ամառ ժամանակ  
տաշտակով լիքը ջուր դնենք արևի տակ, տաշտակի երե-  
սը կիսով չափ ծածկենք, իսկ կիսով չափ բաց թողնենք,  
որ նրա վրա ընկնեն արևի ճառագայթները, մի երկու  
ժամից յետոյ կ'նկատենք, որ տաշտակի մէջ ջուրը թէ  
բաց և թէ ծածկւած տեղում տաքացել է. այդ նրանից է,  
որ արևի Չերմութիւնը ջրի միջով տարածւեց տաշտակի  
բոլոր մասերում: Եթէ մի քանի սենեակների դռներն  
իրար մէջ բացենք և սենեակներից մէկում վառարանը վա-  
ռենք, մի երկու ժամից յետոյ բոլոր սենեակները կ'տա-  
քանան. այդ նրանից է, որ վառարանի Չերմութիւնը օդի  
միջով տարածւեց միւս սենեակները:

Բայց Չերմութիւնը բոլոր մարմինների միջով միա-

կերպ չի տարածւում: Օրինակ, եթէ միանման երկաթէ  
և փայտէ ձողերի մի մի ծայրերը միաժամանակ դնենք  
կրակի մէջ, մի փոքր անցնելուց յետոյ կ'նկատենք, որ  
երկաթէ ձողի դուրս մնացած ծայրն աւելի է տաքացել,  
քան փայտէ ձողի ծայրը. այդ նրանից է, որ փայտի մի-  
ջով Չերմութիւնն աւելի վատ է տարածւում, քան երկա-  
թի միջով. այսպիսով, մարմինները լինում են տարաթեան  
չափ և փառ հատրտիքներ:


*Չերմութիւնից մարմնների հարստ' ևն և արտը-  
շխանակ:*— Երբ սառցասնից սառուցը դուրս ենք բերում,  
Չերմութիւնից նա սկսում է հալւել. իսկ եթէ միևնոյն  
սառուցի հալւած ջուրը դնենք մի շատ ցուրտ տեղ, նա  
նորից սառուց կ'դառնայ: Եթէ արճիճը դնենք վառա-  
րանի վրա, նա Չերմութիւնից նոյնպէս կ'հալւի, իսկ  
եթէ վառարանի վրայից վերցնենք, նա նորից կ'սառչի և  
կ'ամրանայ: Բացի այդ, եթէ ջուրը ամանով երկար պա-  
հենք կրակի վրա, նա կ'ամաց-կ'ամաց կ'պակասի և բոլորո-  
վին կ'վերջանայ. ինչ եղաւ ջուրը. գոլորշիացաւ և տա-  
րածւեց օդի մէջ: Այդպէս կ'գոլորշիանայ նաև արճիճը,  
եթէ նրան մենք ենթարկենք մեծ տաքութեան: Չերմու-  
թիւնից հալւում են նաև երկաթը, ոսկին, քարը. եթէ  
դրանց հալւածքները ենթարկենք մեծ տաքութեան, նրանք  
նոյնպէս կ'գոլորշիանան:

*Չերմութիւնից մարմններն ընդարձակում ևն:*— Երբ  
մենք բաղնիքից դուրս ենք գալիս և ուզում ենք հագնուել,  
մեր ոտները դժւարութեամբ են կօշիկների մէջ մտնում.  
այդ նրանից է, որ մեր ոտները Չերմութիւնից լայնանում  
են: Երբ կաթսայի մէջ ջուրը շատ է տաքանում, սկսում  
է բարձրանալ ու թափւել. այդ Չերմութիւնից և ջրի ըն-

դարձակելուցն է: Եթէ ցուրտ տեղում դրած շի բերանը խցանով ամրացնենք և շիշը գցենք տաք ջրի մէջ, շի բերանից խցանը դուրս կ'ընկնի: այստեղ էլ շի միջի օդը ջերմութիւնից ընդարձակուում է և ճնշելով, խցանը դուրս է շարտում:

Ջերմութեան պակասութիւնից, ընդհակառակն, մարմինները սղմուում են. եթէ երկաթի մի բարակ ձող կրակի մէջ լաւ տաքացնենք, երկարութիւնը չափենք, ապա երկաթը սառեցնենք և նորից չափենք, կ'նկատենք, որ երկաթը սառելուց յետոյ կարճացաւ ու սղմւեց. այդ է պատճառը, որ ակների երկաթէ շրջանակը նախ տաքացնում են կրակի մէջ և ապա հագցնում են ակի վրա. շրջանակը սառելով սղմուում է և սղմելով ակը, նրան ամուր է պահում:

Ջերմաչափ:— Հեղուկների մէջ ջերմութիւնից ամենից շատ ընդարձակողը սնդիկն է. սնդիկի այդ յատկութիւնից օգտւելով, մարդիկ նրանից շինում են ջերմաչափեր: Ջերմաչափը ծայրերը փակ մի ապակեայ խողովակ է, որի ցածի ծայրն ուռուցիկ է և մէջը սնդիկ լցրած: Այդ խողովակն ամրացրած է մի փայտի վրա. փայտի վրա կան գծեր և թւանշաններ: Երբ օդի մէջ ջերմութիւնն աւելանում է, սնդիկն ընդարձակելով, սկսում է խողովակի մէջ վեր բարձրանալ, իսկ երբ օդի մէջ ջերմութիւնը պակասում է, սնդիկը սղմւելով,



Ջերմաչափ.

խողովակի մէջ սկսում է իջնել: Մնդիկի բարձրանալով ու իջնելով և թւանշանների օգնութեամբ մարդիկ կարողանում են իմանալ ջերմութեան չափը. այստեղից անա այդ գործիքը ստացել է Ջելսիուսի անունը:

### ՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հնում, մի անգամ, մէկ հովիւ սարի վրա ման գալիս նկատում է, որ ոտները կաշում են գետնին. նա մնում է զարմացած. մտածում է, մտածում և երբ ոտնամանները հանելով, սկսում է մերկ ոտներով ման գալ, նկատում է, որ այլ ևս ոտները գետնին չեն կաշում: Այս բանով հետաքրքրւում են նաև ուրիշները և երկար փորձերից յետոյ գտնում են, որ հողի տակ գտնւում է երկաթի նման մի մետաղ, որը ձգում, իրեն է կապնում երկաթէ առարկաները և որովհետև հովիւ սանամանների տակ խփած էին երկաթէ մեխեր, այդ պատճառով նրա ոտները կաշում էին գետնին: Ահա այդ ժամանակից յայտնի դարձաւ յիշեալ մետաղը, որը կոչւում է մագնիս, իսկ նրա ձգողական ուժը՝ մագնիսականութիւն:

Պայտանման այս փոքրիկ մետաղը մագնիս է. մօտեցնենք նրան ասեղին. ասեղը թռչում է և կաշում մագնիսի ծայրին. այդ մագնիսի ձգողական ուժն է, մագնիսականութիւնը:



Մագնիսը ձգում է ասեղը.

Բնական և արհեստական մագնիս:— Բնական մագնիսը հանք է. նա շատ նման է երկաթին և գտնւում է երկաթի հետ միասին գետնի տակ. այդ պատճառով նա կոչւում է բնական մագնիս: Արհեստական մագնիսը պատրաստում են պողպատից: Արհեստական մագնիս ստանա-

լու համար նախ պողպատը լաւ տաքացնում են կրակի մէջ, ապա մագնիսի մի ծայրով քսում են պողպատի մի ծայրին, իսկ մագնիսի միւս ծայրով քսում են պողպատի միւս ծայրին. այդպիսով պողպատն ստանում է մագնիսական ուժ և այդ ուժն էլ մնում է նրա մէջ սառելուց յետոյ, որ և կոչւում է մագնիս: Երկաթն էլ է ստանում մագնիսական ուժ, բայց դա լինում է կարճ ժամանակով. երբ նրան հեռացնում են մագնիսից, նա շուտով կորցնում է մագնիսական ուժը:

Մագնիսը ձգում է դէպի իրեն միայն պողպատն ու երկաթը. եթէ մի թղթի վրա լցնենք պողպատի, երկաթի, փայտի և քարի շատ մանր կտորներ և մագնիսի ծայրը մօտեցնենք նրանց, կ'տեսնենք, որ մագնիսի ծայրերին կպչում են միայն պողպատի և երկաթի կտորները, իսկ փայտի և քարի կտորները տեղից չեն շարժւում:



Մագնիսը ձգում է միայն երկաթն ու պողպատը.

Մագնիսի ուժը գտնւում է ծայրերում:—Եթէ մենք մագնիսի ծայրը մօտեցնենք ասեղին, նա ամուր կ'կպչէ մագնիսի ծայրին, այն ինչ, եթէ ասեղը մօտեցնենք մագնիսի մէջտեղին, նա մագնիսին չի կպչի. այդ նրանից է, որ մագնիսի ձգողական ուժը գտնւում է նրա ծայրերում: Որպէս զի մագնիսի ձգողական ուժը մեծ լինի, նրան ծուռ են և երկու ծայրերը մօտեցնում իրար, որ երկու ծայրերը միասին ձգեն:


Մագնիսի ծայրին կպած ասեղը նոյնպէս ստանում է մագնիսականութիւն: Եթէ ասեղը կպցնենք մագնիսի ծայրին և ապա վերցնելով նրան, մօտեցնենք երկաթի մանրիկ կտորներին, այդ կտորները կ'կպչեն ասեղի ծայրին:

Մագնիսի բեռեռները:—Մագնիսի ծայրերը կոչւում են բեռներ. բեռներից մէկը կոչւում է հիւսիսային, իսկ միւսը՝ հարավային: Բեռները մի հետաքրքիր յատկութիւն ունին. վերցնենք երկու ասեղ, դնենք նրանց ասեղանի վրա այնպէս, որ սուր ծայրերը լինեն մի կողմում, իսկ բութ ծայրերը՝ միւս կողմում: Ապա մագնիսի մի ծայրով մի քանի անգամ քսենք ասեղների սուր ծայրերին, իսկ միւս ծայրով քսենք ասեղների բութ ծայրերին.



Մագնիսի մի ծայրով քսում են ասեղների սուր ծայրերին, իսկ մագնիսի միւս ծայրով քսում են ասեղների բութ ծայրերին.

դրանից յետոյ, եթէ այդ երկու ասեղների սուր ծայրերը մօտեցնենք իրար, կ'տեսնենք, որ նրանք հրում են միմեանց, այսինքն փախչում են մէկ մէկուց. այդ նոյն բանը կ'տեսնենք, եթէ մօտեցնենք իրար ասեղների բութ ծայրերը. իսկ եթէ մէկ ասեղի սուր ծայրը մօտեցնենք միւս ասեղի բութ ծայրին, կ'տեսնենք, որ նրանք ձգում են միմեանց. այդ նրանից է, որ մագնիսի միևնոյն բեռները հրում են միմեանց, իսկ սարբեր բեռները ձգում են միմեանց:




Միևնոյն բեռները հրում են միմեանց, իսկ սարբեր բեռները ձգում են միմեանց.

Եթէ մագնիսացրած ասեղը մէջտեղից թելով կապենք ու կախ տանք մի ձողից, կ'տեսնենք, որ ասեղը մի փոքր շարժւելուց յետոյ կանգ առնելով, մի ծայրը դարձնում է դէպի հիւսիս, իսկ միւս ծայրը՝ դէպի հարաւ, և որքան էլ ասեղը շարժւելու լինենք, նա նորից կանգ կ'առնի առաջւան ուղղութեամբ: Ահա այստեղից վերց-

րած՝ մագնիսի այն ծայրը, որ ուղղւած է լինում դէպի հիւսիս, անւանում են հիւսիսային բևեռ, իսկ այն ծայրը, որ ուղղւած է լինում դէպի հարաւ, անւանում են հարաւային բևեռ:

Կողմնացոյց:—Մագնիսի բևեռների այդ յատկութիւնից օգտւելով, մարդիկ նրանից շինել են մի գործիք, որին ասում են կողմնացոյց: Կողմնացոյցը մի փոքրիկ բոլորակ արկղ է, երեսն ապակիով ծածկած. արկղի մէջ տեղաւորւած է մագնիսի մի փոքրիկ սլաք, որ ազատ շարժւում է իր առանցքի շուրջը: Արկղն ինչպէս էլ որ դնենք, սլաքն իր մի ծայրով կ'նայի հիւսիս, իսկ միւս ծայրով հարաւ. այդպիսով, ուր էլ որ գտնւելու լինենք, ցերեկ լինի այդ,



Կողմնացոյց. սլաքի մի ծայրը դարձրած է լինում հիւսիս, իսկ միւսը՝ հարաւ.

թէ գիշեր, կողմնացոյցի օգնութեամբ կ'իմանանք երկրի հիւսիսային և հարաւային կողմերը, իսկ հիւսիսային և հարաւային կողմերն իմանալով, կ'իմանանք նաև արևելեան և արևմտեան կողմերը:

Քանի որ կողմնացոյցը չէր հնարւած, մարդիկ ծովերի վրա հեռու ճանապարհորդութիւններ չէին կարողանում կատարել, որովհետև դուրս գալով բաց ծովերի վրա, ցամաքն այլևս չէր երևում և

մարդիկ չէին կարողանում գիշերները կամ ամպոտ օրերին իրենց ուղած տեղը գնալ. իսկ երբ կողմնացոյցը հնարւեց, այն օրից այդ փոքրիկ սլաքի օգնութեամբ մարդիկ չափշփում են ծովերը և երկրից երկիր պատում:

Օ Դ

Այն, որը մենք ամեն ընդհանրապէս ներշնչում ու արտաշնչում ենք, օդ է: Երբ մենք արագ վազ ենք ապրիս, զգում ենք, որ մի հով դիպչում է մեր երեսին. այդ էլ օդն է. երբ քամին ծառերի տերևները շարժում է և մեր գլխարկները վերցնում շարժում է դետին, այդ նոյնպէս օդն է: Օդը թափանցիկ է և գոյն չունի, այդ պատճառով մենք նրան չենք տեսնում. նա միևնոյն ժամանակ հոտ ու համ էլ չունի:

Օդ ամեն տեղ կայ:—Եթէ վերցնենք մի գատարկ շիշ և նրան ընկղմենք ջրի մէջ, կ'նկատենք, որ շիշ միջից պղպշակներ են բարձրանում. դա օդն է, որը դուրս է հրւում շիշ միջից, երբ նրա տեղը գալիս բռնում է ջուրը: Եթէ կաւիճի մի կտոր գցենք շրի մէջ, կ'տեսնենք, որ նրանից նոյնպէս պղպշակներ են բարձրանում. դա էլ օդն է, որ դուրս է գալիս կաւիճի փոքրիկ ծակոտիների միջից, երբ նրանց մէջ ջուր է լցւում: Իրսում մենք ազատ շնչում ենք. այդտեղ օդ կայ. սենեակում նոյնպէս ազատ շնչում ենք. սենեակում էլ օդ կայ: Եթէ գատարկ շշում օդ կայ, կաւիճի ծակոտիների մէջ էլ օդ կայ, դրսում, սենեակում նոյնպէս օդ կայ, ուրեմն, օդ ամեն տեղ կայ:

Օդ ջրի մէջ էլ կայ: Եթէ մի բաժակի մէջ սառը ջուր լցնենք և դնենք մի տաք տեղ, մի փոքր անցնելուց յետոյ կ'նկատենք, որ բաժակի պատերի վրա ներսից նստում են մանր պղպշակներ, որոնք աննկատելի բարձրանում են ջրի երեսը և պատւում. դա ջրի մէջ եղած օդն է: Եթէ ջրի մէջ օդ չլինէր, նրանում ձկները և ծովային միւս կենդանիները չէին կարող ապրել:

Օդը տեղ և բուռն:—Երբ մենք օդ ենք ներշնչում,





### Չ Ո Ւ Ր

Մեր կեանքի անհրաժեշտ նիւթերից մէկը Չուրն է. մենք Չուրը խմում ենք, նրանով պատրաստում ենք կերակրներ, նրանով մաքրում ու մաքրում ենք մեր հագուստները. ջրով ապրում և սնունդ են ստանում կենդանիներն ու բոյսերը. եթէ չլինէր Չուրը, երկրի վրա ամեն ինչ կ'չորանար:

Շատ քիչ տեղեր կան, ուր Չուր չի լինում. համարեա ամեն տեղ մենք պատահում ենք աղբիւրների, գետերի, ջրհորների և ծովերի: Ծովերի ջրերը լինում են աղի և դառն. նրանք խմելու համար անպէտք են և կոչւում են ծովային Չուր. գետերի և աղբիւրների ջրերը աղի ու դառը չեն. դրանք խմելու համար պէտքական են և կոչւում են անուշ Չուր: Կան աղբիւրներ, որոնք ունին թթու և բերան ծակծկող ջրեր. այդպիսի ջրերը կոչւում են հանքային ջրեր. կան նաև տաք հանքային ջրեր, որոնցով բժշկւում են զանազան հիւանդութիւններ:


Ջրի երեք դրոշմները:—Չմեռը գետերը ծածկւած են լինում սառուցով. եթէ սառուցը տուն բերենք և դնենք ամանի մէջ, նա տաքանալով կ'հալի և Չուր կ'դառնայ, այսինքն կ'հեղուկանայ: Եթէ այդ Չուրն ամանով դնենք կրակի վրա ու եփ տանք, նա կ'գոլորշիանայ, այսինքն կ'դառնայ գազ: Եթէ եփող ջրի գոլորշին հաւաքենք սառն ամանի մէջ, նա նորից կ'դառնայ Չուր և եթէ այդ Չուրը դնենք դուրսը կամ շատ ցուրտ տեղ, նա նորից կ'դառնայ սառուց: Այդպիսով, Չուրը կարող է երեք դրոշմիւն ընդունել՝ կարծր, հեղուկ և գազային, նայած թէ նա տաքութեան որ աստիճանի վրա է գտնւում:

Ջրի շարժողութիւնը:—Չուրը միշտ գոլորշիանում է. նա գոլորշիանում է և արև ժամանակ, և արև չեղած ժամանակ. եթէ ամառը բաժակով Չուրը դնենք շաքում, մի կամ երկու օրից յետոյ նա կ'ցամաքի, այսինքն կ'գոլորշիանայ: Այդպէս շարունակ գոլորշիանում են աղբիւրների, գետերի և ծովերի ջրերը. գոլորշիները բարձրանալով օդի մէջ, թանձրանում ու ծանրանում են և կաթիլ-կաթիլ ցած են թափւում. դա անձրևն է: Անձրևը ծծւում է գետնի մէջ, ողողում է սար ու ձոր. աղբիւրներն ու գետերը վարարում են և գնում բռնում են գոլորշիացած ջրերի տեղը. ջրերը նորից գոլորշիանում են և նորից անձրև գոյացնում: Անձրևի կաթիլները ցած թափւելիս երբեմն ճանապարհին պատահում են ցուրտ քամիների և սառչելով դառնում են կարկուտ: Իսկ ձմեռները օդի մէջ եղած գոլորշիները ցրտից սառչելով, դառնում են ձիւն: Ուրեմն ջրի գոլորշիանալուց գոյանում են ամպեր, իսկ ամպերից՝ անձրև ու ձիւն, որոնք իջնելով գետնի վրա, փափկացնում են հողը և կեանք տալիս բուսականութեանը: Այսպիսով Չուրը գտնւում է անընդհատ շարժողութեան մէջ:

Ջուրը սառուց դառնալիս լեղարձակում է:—Ջերմութեան մասին խօսելիս տեսանք, որ բոլոր մարմինները ցրտից սղմւում են. նոյնը տեսանք նաև օդի մասին բառուց չի դարձել, ցրտից սղմւում է. բայց հէնց որ սառուց է դառնում, ընդհակառակն, ընդարձակւում է. օրինուց է դառնում, ընդհակառակն, ընդարձակւում է. օրինակ, երբ ձմեռը ջրով լիքը կուժը մնում է դուրսը, սառնակ, երբ ձմեռը ջրով լիքը կուժը մնում է դուրսը, սառուում ու ճաքում է. այդ նրանից է, որ Չուրը սառուց գտնանալով, ընդարձակւում է և ճնշելով, կուժը ճաքացնում է:

Չարքարը, աղը և շառ տեսակ նիւթեր ջրի մէջ լուծուում են. ջրի այդ յատկութիւնը այն օգուտն է տալիս, որ նախ՝ կերակրների մեծ մասը եփում ենք, ջրիացնում և հեշտ մարսելի դարձնելուց յետոյ ենք ուտում և երկրորդ՝ որ ջուրը ծծւելով հողի մէջ, լուծում է նրա աղային և օգտակար նիւթերը և դրանցով սնունդ է տալիս բուսականութեանը:

Ջրի բարատեղիք մասերը:—Ջուրը բազկացած է երկու տարբեր գազերից. դրանցից մէկը թթւածիւն է, այն թթւածինը, որը կազմում է նաև օդի բաղադրիչ մասը և որի մէջ կրակի պէժը բոցալաւում է. իսկ միւս գազը կոչւում է ջրածին: Զրածինը նոյնպէս հետաքրքիր գազ է. եթէ ջրածինն մօտեցնենք վառող լուցկին, ջրածինը կ'ալայթի և կապոյտ բոց կ'արձակի. հետևապէս, ջրածինը բնիկող նիւթ է: Բացի այդ, ջրածինը օդից 14 անգամ թեթև է. այդ պատճառով, եթէ ջրածինը ազատ թողնենք, նա կ'սկսի վեր բարձրանալ. ջրածնի թեթևութիւնից օգուտելով, մարդիկ նրանով լցնում են ամուր կտորից շինւած



Օդային փամփուշտը և օդապարիկը լցնում են ջրածնով, որից նրանք թեթևանալով բարձրանում են օդի մէջ:

մեծ գնդեր և նրանցով բարձրանում են օդի մէջ. դրանց ասում են օդապարիկ: Զրածնով են լցնում նոյնպէս այն գոյնզգոյն փամփուշտները, որոնց երեխաները բաց են թողնում օդի մէջ:

ՅՈՒՅՍԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԻՏՈՅՔՆԵՐԻ ԵՒ ՆԻԻԹԵՐ:

- Կաւ (глина)
- Աւազ (песокъ)
- Աւազաքար (песчаникъ)
- Քարածուխ (каменный уголь)
- Սնդիկ (ртуть)
- Բուսահող (перегной)
- Արծիճ (свинецъ)
- Ջերմաչափ (термометръ)
- Պայտածև մագնիս ծայրի սողպատով (подковообр. магнитъ)
- Մագնիսի սլաք, պատւանդանի վրա (магнитная стрѣлка)
- Ասեղներ (иглоки)
- Պողպատի թեփ (ошплки стали)
- Երկաթի թեփ (ошплки желѣза)
- Փայտի թեփ (ошплки дерева)
- Կողմնացոյց (компасъ)
- Ապակէ զանգ կամ բաժակ (стеклянный колпакъ)
- Ապակէ կոնք (тазъ)
- Մեղրամոմ (восковая свѣча)
- Խցանափայտ փոքրիկ մոմակալով (пробка съ подсвѣчникомъ)

Այս պիտոյքներն ու նիւթերն անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ գաստղրքի մի քանի յօդւածներն աւանդելու ժամանակ:



### Յ Ա Ն Կ

Կազմողների կողմից . . . . . 3

#### Մ Ա Ր Դ

Մեր մարմնի մասերը . . . . . 7

Մեր մարմնի կազմութիւնը . . . . . 8

Մեր մարմնի գործարանները . . . . . 10

#### Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր

Շուն . . . . . 18

Կատու . . . . . 21

Մուկ . . . . . 23

Զի . . . . . 25

Կով . . . . . 28

Ոչխար . . . . . 30

Հաւ . . . . . 32

Ազոաւ . . . . . 35

Ճնձկուկ . . . . . 37

Ծիծեռնակ . . . . . 38

Օձ . . . . . 41

Գորա . . . . . 42

Զուկ . . . . . 45

Մեզու . . . . . 47

Բզէզ . . . . . 50

Ճանճ . . . . . 52

Սարդ . . . . . 53

### Բ Ո Յ Ս Ե Ր

Տանձենու մասերը . . . . . 55

Տանձենու սննդառութիւնն ու աճումը . . . . . 59

Բոյսերի նշանակութիւնը . . . . . 61

Խնձորենի . . . . . 62

Սալորենի . . . . . 64

Վարդ . . . . . 66

Մեխակ . . . . . 68

Արեածաղիկ . . . . . 69

Վարունգ . . . . . 70

Լոբի . . . . . 71

Բակլա . . . . . 72

Միսեռ . . . . . 73

Ոսպ . . . . . 75

#### Հ Ա Ն Ք Ե Ր

Կաւ . . . . . 76

Աւազ . . . . . 78

Պարտիզի հողը . . . . . 81

Աւազաքար . . . . . 83

Աղ . . . . . 85

Քարածուխ . . . . . 87

Նաւթ . . . . . 89

Մնզիկ . . . . . 90

#### Բ Ն Ա Կ Ա Ն Ե Ր Ե Ի Ո Յ Թ Ն Ե Ր

Մարմիններ . . . . . 92

Զերմութիւն . . . . . 93

Մազնիսականութիւն . . . . . 97

Օղ . . . . . 101

Զուր . . . . . 106

Ցուցակ անհրաժեշտ պիտոյքների և նիւթերի . . . . . 109

0.000000

11 4 5 7 10

10 10 19 6

10 55 18 19 2907 2

9 19 6 19 10 945 55

6 19 10 19 10 580

225 4

2013

« Ազգային գրադարան



NL0063665

